

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. ՄԿՐՏԻՉ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՌՕՇԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԹԵՄԻՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ

ՉԱՐԼԶ ԴԻՔԵՆՍ

ՄԵՐ ՏԻՐՈՋ՝ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԿՅԱՆՔԸ

գրված Չարլզ Դիքենսի գրչով՝
իր զավակների համար

ՀԱՍԵ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄ
2021

ՀՏԴ 27:821.111 – 3 Դիքենս
ԳՄԴ 86.37 + 84 (4Մբ) – 4
Դ 549

Տպագրվել է
Գրիգոր Մովսիսյան և Նաիրա Կարապետյան
ամուսինների մեկենասությամբ:

Դիքենս Չարլզ
Դ 549 Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կյանքը / Չ. Դիքենս; Թարգմանությունը անգլերենից՝ Կարեն Գևորգյանի. — Եր.: Հեղի. հրատ, 2021.— 80 էջ:

Բարեպաշտ ընթերցողին ենք ներկայացնում համաշխարհային դասական գրականության բացառիկ մեծություններից մեկի՝ անգլիացի վիպասան Չարլզ Դիքենսի «Մեր Տիրոջ Կյանքը» գիրքը, որը ժամանակին նա գրել է սեփական երեխաների համար: Չնայած այդ հանգամանքին՝ գիրքը գրվել է մեծ գրողին հատուկ բավականին խիստ և սեղմ ոճով, ինչն անհամեմատ մեծացնում է հնարավոր ընթերցողների շրջանակը՝ ընդլայնելով նրանց տարիքային կազմը՝ բացի երեխաներից ու պատանիներից ներառելով նաև բոլոր նրանց, ովքեր քիչ են ծանոթ կամ անծանոթ են Ավետարանական պատմությանը, սակայն ցանկություն ունեն ավելի շատ իմանալու մեր Տեր Հիսուս Քրիստոսի Կյանքի և հանուն հանուր մարդկության փրկության Նրա Մահվան և Հարության մասին:

Հուսով ենք, որ գիրքը կդառնա լավագույն հոգևոր ձեռնարկը ընտանեկան ընթերցանության համար՝ հոգեկան բավականություն և հոգևոր ուրախություն պարգևելով մեր ընտանիքներին, նպաստելով տարբեր սերունդների փոխըմբռնմանն ու հոգևոր սերտացմանը:

ՀՏԴ 27:821.111 – 3 Դիքենս
ԳՄԴ 86.37 + 84 (4Մբ) – 4

ISBN 978–9939–0–3632–8

© Գևորգյան Կ., 2021
© ՀԱՍԵ Արագածոտնի թեմ, 2021

Թարգմանիչն իր համեստ աշխատանքը նվիրում է

Արցախյան եռապատերազմի մասնակիցներին,
իր զարմիկի՝ Ադամ Սահակյանի, նրա հրամանատարի՝
Ալեքսան Առաքելյանի, Մենուա Հովհաննիսյանի,
Քյարամ Սլոյանի և պատերազմներում զոհված
բոլոր հերոսների հիշատակին.
նրանց սխրանքը և հիշատակն անմահ են:

Թարգմանիչն իր երախտագիտությունն է
հայտնում սիրելի ընկերոջը՝ Քրիստոսով եղբայր
Գրիգոր Մովսիսյանին,
որի անգնահատելի օգնությունը ծանր և դժվար
պահերին հնարավոր դարձրեց գրքի ծնունդը

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ

Այս գիրքը՝ վերջինը Չարլզ Դիքենսի հրատարակվող գործերից, ունեցել է հատուկ նշանակություն և հեղինակի համար ներկայացրել զուտ անձնական հետաքրքրություն՝ այդպիսով ամբողջովին տարբերվելով նրա մյուս բոլոր գործերից: Իր կրոնաբարոյական ուղղվածությունից զատ՝ ձեռագիրը վիպասանի համար ունեցել է հիմնականում նեղ անձնական բնույթ՝ լինելով մեծ մարդասերի ոչ այնքան խորհրդածության բացահայտումը, որքան տուրք նրա համընդգրկուն սրտին և մարդասիրությանը, ինչ խոսք, նաև արտահայտելով նրա անսահման նվիրվածությունը մեր Տիրոջը: Այն գրվել է 1849 թվականին՝ հեղինակի մահից քսանմեկ տարի առաջ, բացառապես նրա երեխաների համար: Միակ գրչագիրը ամբողջովին գրված է ձեռքով և թողնում է ոչ թե մաքրագրի, այլ ինքնաբուխ սևագրի տպավորություն:

Չարլզ Դիքենսը հաճախ էր պատմում իր երեխաներին Ավետարանական պատմություններ և նրանց ուղղված նամակներում կատարում սուրբգրային մեջբերումներ: «Մեր Տիրոջ Կյանքը» գիրքը նա գրել է՝ չունենալով հրատարակման որևէ մտադրություն, այլ որպեսզի երեխաները տանը մշտապես ունենային ընտանիքի հոր կրոնական խոհերի գրառումը: Հեղինակի մահից հետո ձեռագիրը դառնում է նրա քենու՝ օրիորդ Ջորջինա Հոգարթի սեփականությունը: Վերջինիս մահից հետո՝ 1917 թվականին, այն անցնում է սըր Հենրի Ֆիլդինգ Դիքենսի տնօրինությանը:

Չարլզ Դիքենսի նպատակը պարզ էր, նա «Մեր Տիրոջ Կյանքը» գրել էր այն եղանակով, որը լավագույնս համապատասխանում էր սեփական երեխաների ընկալմանը, այն նախատեսված

չէր հրատարակման՝ հանրության համար: Նրա որդին՝ սըր Հենրին, մտադիր չէր իր կյանքի օրոք հրապարակել այս գործը, մյուս կողմից էլ պատճառ չէր տեսնում այն չիրականացնելն իր մահից հետո: Սըր Հենրիի կտակի համաձայն՝ «Մեր Տիրոջ Կյանքը» կարող էր լույս տեսնել միակ պայմանով՝ եթե իր մահից հետո ընտանիքի անդամների մեծամասնությունը հավանություն տար ձեռագիրը դարձնելու մարդկության սեփականությունը: Առաջին անգամ այն լույս ընծայվեց շարունակաբար՝ շարքի տեսքով, 1934 թվականի մարտին:

Մերի Դիքենս
1934 թ. ապրիլ

1996 ԹՎԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ

Չարլզ Դիքենսն իր այս հիասքանչ գրքույկը գրել է 1849 թվականին իր ամենամտերիմ և արյունակից ընթերցողների՝ սեփական երեխաների համար՝ առանց այն հրապարակայնության ենթարկելու կամ իր հսկայաթիվ երկրպագուների որևէ բանակին հաճոյանալու մտադրության: Այստեղ բացահայտվում են նրա մտքերը քրիստոնեության վերաբերյալ՝ ամենաէականի մասին, այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ նա սույն հոգեշահ գրվածքը գրել է ոչ միայն դեռատի ընթերցողների համար, այլև՝ կրկնելու սեփական հավատամքը՝ Աստծո Ավետարանի հանդեպ այն ամրապնդելու համար՝ այսպիսով վերապատմելով Ավետարանական պատմությունը գրավչորեն թեթև, բայցև ուղիղ ու ճշգրիտ կերպով:

Հրատարակված գիրքն ինքնին կարևորագույն ուղերձ է աշխարհի բոլոր ընտանիքներին: Այսօր ես պարզապես ցանկանում եմ նրան ավելացնել այն խոր գիտակցումը, թե Ով էր Հիսուս Քրիստոսը՝ Ով մնում է անփոփոխ մինչ այսօր և հավիտյան: Մեզ համար Նա մեր փրկության համար Մարդացած Աստված է՝ ծնված Կույս Մարիամից: Նա ծնվեց Մարիամի և Իր ընտրած երկրային խնամող հայր Հովսեփի ընտանիքում: Մենք պետք է ձգտենք էլ ավելի խոր հասկանալու այն Փրկագործությունը, որը Հիսուսը մինչև վերջ հասցրեց մեզ համար, և թե ինչպես այն կատարվեց և շարունակվում է իրականանալ Սուրբ Հաղորդության միջոցով և ողջ աշխարհում սփռված Քրիստոսի Եկեղեցու կյանքում: Չնայած որ Չարլզ Դիքենսը բացառել էր իր այս գրքի լույսընծայման հնարավորությունը իր կամ զավակների կյանքի օրոք, նրա որդիներից մեկը՝ իմ նախանախապապ սըր Հենրի

Ֆիլդինգ Դիքենսը, գրեց իր կտակում, որ իր մահից հետո գիրքը կարող է լույս ընծայվել ընտանիքի լիովին համաձայնության դեպքում: Ընտանիքը թույլտվության հարցում համաձայնության եկավ, և գիրքը հրատարակվեց 1934 թվականին:

Ես, կինս՝ Ժան–Մարին, և դուստրերս՝ Քեթրինը և Լյուսին, հուսով ենք, որ այս գրքի ընթերցանությունը կդառնա յուրահատուկ հոգևոր փոքր ճանապարհորդություն–փորձառություն, իսկ գրքի ուղերձի անկեղծությունը մեզ բոլորիս կընձեռի Աստծուն առավել լավ հասկանալու կարողություն:

Քրիսթոֆեր Չարլզ Դիքենս
1996 թ. մարտ

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԽՈՍՔ

Մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի մասին գրել են մեծ թվով գրողներ, այդ թվում՝ նոբելյան մրցանակակիրներ և այլք: Նրա Կյանքի և Մահվան մասին պատմող գրքերի մեջ իր ուրույն տեղն ունի անգլիացի մեծ դասականի՝ Չարլզ Դիքենսի «Մեր Տիրոջ Կյանքը» գիրքը, որը գողտրիկ ստեղծագործություն է՝ գրված հեղինակի երեխաների համար:

Մեծ գրողը կյանքի օրոք որոշել էր իր սիրելի զավակներին թողնել ամենալավը, ամենաբարին ու ամենաարժեքավորը, թողնել միմիայն նրանց և ոչ թե աշխարհին: Եվ նա որպես ժառանգություն իր զավակներին է հանձնում մի ձեռագիր, որը վերնագրված էր «Մեր Տիրոջ Կյանքը»: Ինչ էր ներկայացնում այդ ձեռագիրը, ինչո՞վ էր այն արժեքավոր: Այստեղ Դիքենսը պարզ և մատչելի ցույց է տալիս ոչ միայն քրիստոնեության էությունը, այլև քրիստոնյայի, թե ինչ ասել է լինել քրիստոնյա, ինչ է քրիստոնյայի կյանքը:

Չարլզ Դիքենսը մեկն է մարդկության պատմությանը հայտնի այն հազվագյուտ գրողներից, որոնք կարողացան **փոխել** աշխարհը (հիշու՞մ եք Մարքսի երազանքը) գրականության շնորհիվ, ինչպես Նարեկացին, ինչպես Դանտեն... Նրան հաջողվեց իր ժամանակակից **աշխարհը դարձնել ավելի լավը**: Ինչպես նկատել է մեկ այլ անգլիացի աշխարհահռչակ գրող, կաթոլիկ Գիլբերտ Չեստերտոնը, նա կարողացավ դրականապես ազդել և՛ տեղական եկեղեցական ծխի վրա, և՛ հիվանդապահուհիների սովորույթների, և՛ աշխատատների, և՛ վարչապետական դատարանի վրա: Նա եզրակացնում է. «Դրանք փոխվեցին, դրանք հիմա ուրիշ են... Այդ ռեֆորմների անցկացման գործում մեծ և

անհերքելի դեր ունեցավ Դիքենսը: Եվ այս բարեհոգի Դիքենսը... միակն էր ժամանակակից գրողներից, որ ոչնչացրեց հասարակական զզվելի խոցերն ու հասավ ցանկալի ռեֆորմների: Նա իրապես նպաստեց աշխարհի երեսից պարտքային բանտի վերացնելուն, իր ողջ բարեհոգությամբ հանդերձ՝ նա կարողանում էր կործանել... բանտեր»: Մյուս կողմից էլ Դիքենսի խորհրդային կենսագիր Նինա Միխալսկայան է նկատում, որ գրողը, իր «Նիքոլաս Նիքլբի» վեպում անխնա խարազանելով և ծաղրելով ժամանակի Անգլիայի դպրոցական կրթական արատավոր համակարգն ու նրա ահավոր թերությունները, նպաստեց իրավիճակի փոփոխմանը: Վերոհիշյալ վեպում մեծ վիպասանը սրտնեղում է այն փաստից, թե ինչպես է Անգլիայում հրեշավոր կերպով անտեսվում դաստիարակության գործը, որից էլ կախված է, թե ինչպիսի քաղաքացիներ կմեծանան երկրում՝ բարի թե չար, երջանիկ թե դժբախտ:

1934 թվականին՝ «Մեր Տիրոջ Կյանքը» գեղեցիկ ստեղծագործության հրատարակվելուց հետո, մարդկությանը պարզ դարձավ, թե որն էր մեծ գրողի, մարդասերի, հասարակական գործչի հզորության գաղտնիքը, թե ինչով էին պայմանավորված նրա հանճարեղ գործերի՝ ինքնակենսագրական «Դավիթ Կոպերֆիլդի», «Մեծ սպասումների» և մյուսների զարմանահրաշ ներդաշնակությունն ու անաղճատ ամբողջականությունը, ինչն էր ընկած նրա դարակազմիկ վեպերի հիմքում, որն էլ դրանք դարձնում էր առավել իրական, քան գորշ իրականությունը. հավատը, հավատն ու վստահությունը Հիսուս Քրիստոսի հանդեպ: Եվ եթե Տիրոջ Խոսքի համաձայն՝ առանց Նրա մենք՝ քրիստոնյաներս, ոչինչ անել չենք կարող, ապա նույն կերպ էլ առանց Նրա անհնարին է դառնում յուրաքանչյուր գրական իրականության Իրականությունը:

Դիքենսյան վեպերի այս զարմանահրաշ ներդաշնակ իրականությունն է, որ սոցիալիստական հասարակարգի տարիներին բարու և ճշմարիտ սիրո հավատով դաստիարակեց շատ ու

շատ պատանի ընթերցողների՝ փոխարինելով բացակայող քրիստոնեական դաստիարակությանը: Այս վեպերը նրանց պատանի խանդավառ և փոթորկուն սրտերին ներշնչում էին հավատ առ բարին, արդարության, իսկական սիրո, հավատարմության և ճշմարիտ ընկերության հաղթանակը: Տողերիս հեղինակը պատկանում է այն սերնդին, որի մանկությունն ու պատանեկությունն անցան անցյալ դարի ութսունական թվականներին, մի ժամանակաշրջան, որն, ինչպես հայտնի է, սոցիալիստական հասարակության ծաղկման, բայց, ավա՜ղ, վերջին փուլն էր: Այս ժամանակահատվածում մարդկանց համար ապահովվեց համեմատաբար անհոգ և բարեկեցիկ կյանք, որը, սակայն, զուրկ էր քրիստոնեական հոգևոր արժեքներից: Մեր սերունդն ապրում էր մեծ սիրո և ընկերության իդեալի շուքի ներքո՝ տոգորված ռոմանտիզմի և պատանեկության ծարավի ոգով: Մենք որոնումների մեջ էինք, որոնք, ըստ էության, հոգևորի որոնումներն էին: Մենք ձգտում էինք հասկանալու սիրո գաղտնիքը, բացահայտելու նրա էությունը, գտնելու Սիրո բանաձևը, այն է՝ սահմանումը: Եվ մեր որոնումները մեզ նորից ու նորից տանում էին դեպի Դիքենս, որը տվել է, թերևս, սիրո ամենախոր և ընդգրկուն, բայց և հանճարեղորեն ամենասեղմ ու ճշգրիտ սահմանումը (որն, ի դեպ, զարմանալի զուգադիպությամբ բառացիորեն համընկնում էր նույնպես պաշտելի մեկ այլ գրողի՝ Դոստոևսկու սիրո սահմանմանը)՝ «Սերը խիղճ է և խղճահարություն»: …Այդ գյուտից մենք ապշած էինք և հագեցած Սիրո էության դիքենսյան սահմանմամբ:

Ակամայից հիշում ես, որ Հիտլերը՝ մարդատյաց այդ ճիվաղը, հատկապես պահանջում էր «սպանել խիղճ կոչված քիմերին»՝ սպանելու համար մարդկայինը մարդու մեջ: Չէ՞ որ խիղճն է սաղմը, սկիզբն ու սկզբունքն ամենայն Մարդկայինի:

Այսօր մեծ գրողի հավատամքը մարմնավորող գրքույկը՝ «Մեր Տիրոջ Կյանքը», ուղղված է մեզ՝ մեր երեխաներին, թոռներին: Այստեղ նա հանդես է գալիս որպես քարոզիչ և առաքյալ: Նրա նպատակն է ընթերցողին ծանոթացնել Տեր Հիսուս

Քրիստոսի հետ՝ այլևս չբաժանվելու պայմանով: Նպատակն է ցույց տալ՝ ինչպես ապրել քրիստոնյայի կյանքով՝ Քրիստոսով, «որպեսզի ունենանք խաղաղ կյանք և անխռով, աներկյուղ, երկնուղի մահ»: Դիքենսյան ուղերձը համոզիչ է, քանզի խոշորագույն գրողն ինքն է ապրել քրիստոնյայի կյանքով՝ անվախ, հավատքով լի, չարի և անարդարության դեմ անվեհեր պայքարող: Նա ապրում էր, ինչպես ստեղծագործում, և ստեղծագործում էր, ինչպես ապրում: Քրիստոնյա գրող Չեստերտոնն իր «Չարլզ Դիքենս» աշխատությունում գրում է նրա մասին, «Քրիստոսին հետևած միլիոնավոր մարդկանց մեջ Դիքենսը զբաղեցնում է յուրահատուկ տեղ: Ռեֆորմների կոչ անելով՝ նա պահանջում էր՝ «Վերջ տվեք աղքատությանը», սակայն իր գրքերից ազդարարում՝ «Երանի՜ աղքատներին...»»:

Իր «Որոշակի կասկած փողերի ամենակարողության հանդեպ» հոդվածում Դիքենսը ցասումով է գրում այն մասին, որ «Ոսկե հորթի ստվերն է տարածվել Անգլիայի վրա և չարորակ ախտի պես իրեն ենթարկել մարդկանց կամքն ու բանականությունը»: Նա բրիտանացիներին հորդորում է ոչ թե խոնարհվել անիրավ մամոնային, այլ հակառակը՝ պայքարել արդարության համար, Մեծ Բրիտանիայի մեծագույն զավակը բոլորին կոչ է անում կատարել իրենց քաղաքացիական պարտքը՝ այդպիսով հակադրվելով այս աշխարհի անիրավության, անպատասխանատվության և ծաղրի ոգուն: Փաստորեն իր հոդվածով մեծ մարդասերը, քրիստոնյան մարտահրավեր է նետում այս աշխարհի իշխանին և նրա կամակատարներին՝ այս աշխարհի հզորներին՝ գրելով. «Եթե փողերն իրար վրա դարսելով սարքեինք մի բուրգ, որն իր գագաթով հասներ անգամ լուսնին, միևնույնն է, բուրգը տեղով դույզն–ինչ չէր փոխարինի քաղաքացիական պարտքին»:

Երբ հրատարակվեց Չարլզ Դիքենսի «Սուրբ Ծննդյան երգը», անգլիացի հայտնի և խոշոր գրող Ուիլյամ Թեքերեյն այն գնահատեց որպես ազգային բարերարություն՝ որպես գրողի շռայլ պարգևը հայրենակիցներին: Առանց չափազանցության կարելի

է ասել, որ Դիքենսի ստեղծագործությունները շռայլ պարգև են աշխարհին, իսկ որոշ գործերը, ինչպես, ասենք, «Ձանգակները», «Անգլիայի պատմությունը երեխաների համար», «Ծղրիդն օջախի հետևում» և, իհարկե, «Մեր Տիրոջ Կյանքը»՝ հատկապես մանուկներին: Այսօր էլ անգլիացի մեծ դասականը սիրելի և հասկանալի է բոլոր ազգությունների և՛ երեխաներին, և՛ պատանիներին, և՛ հասուն տարիքի մարդկանց: Սա պայմանավորված է նրա մեծությամբ:

Տեր Աստծո ողորմությամբ թարգմանելով սույն գիրքը՝ թարգմանիչն այսպիսով հույս է տածում ծառայելու Տիրոջ փառքին, մերձավորին և իր նվաստ նպաստը բերելու մեծն Դիքենսի՝ աշխարհը քիչ ավելի բարի դարձնելու ջանքին՝ լծակից դառնալով նրա սկսած աստվածահաճո հարատև գործին: Տա՛ Աստված:

Համարում ենք, որ գրքի թարգմանությունը նաև տուրք է և ինքնատիպ խոնարհում մեծ գրողի անմահ հիշատակին:

Կարեն Գևորգյան
2020 թ. հուլիս

«Ավետում», 2011 թ., կտավ, յուղ., 70 x 60 սմ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Իմ սիրելի՛ երախաներ1, ես շատ մտահոգ եմ՝ գիտեք արդյոք դուք որևէ բան Հիսուս Քրիստոսի Կյանքի Պատմությունից: Որովհետև յուրաքանչյուր ոք պետք է գիտենա նրա մասին: Երբևէ ապրողների մեջ չի եղել մեկը Հիսուսի նման, որ լիներ այդքան սրտացավ, այդքան բարի և հոգատար, այդքան կարեկից բոլոր այն մարդկանց նկատմամբ, որոնք սխալվել էին, այս կամ այն չափով հիվանդ էին կամ էլ թշվառ, քանզի Ինքն էլ երջանիկ չէր: Եվ ինչպես որ Նա հիմա Երկնքում է, այդպես էլ մենք, հուսով ենք, կգնանք մեր մահից հետո այնտեղ, և կհանդիպենք բոլորս ու միասին հավերժ երջանիկ կլինենք. բայց դուք երբեք էլ չեք կարողանա պատկերացնել, թե որքա՛ն հիասքանչ վայր է Երկնային Դրախտը, առանց հասկանալու, թե ով էր Հիսուսը, և ինչ Նա արեց: Նա ծնվել է շա՛տ–շատ վաղուց՝ մոտ երկու հազար տարի առաջ, Բեթղեհեմ կոչված վայրում: Նրա հայրն ու մայրը ապրում էին մի քաղաքում, որի անունն էր Նազարեթ, սակայն, գործի բերումով ստիպված էին մեկնել Բեթղեհեմ: Նրա հայրիկի անունը Հովսեփ էր, իսկ մայրիկի անունը՝ Մարիամ: Եվ քանի որ քաղաքը լեփ–լեցուն էր մարդկանցով, որոնք նույնպես եկել էին իրենց գործերով, ոչ մի սենյակ չգտնվեց Հովսեփի և Մարիամի համար հյուրանոցում կամ մեկ այլ շենքում, ուստի նրանք կայանեցին մի փարախում, ու այս փարախում էլ ծն-

---

1 Թարգմանիչը միտումնավոր է այստեղ կիրառել գրաբարյան «երախա» բառը, որ նշանակում է ինչպես «երեխա, դեռատի», այնպես էլ՝ «նորադարձ քրիստոնյա»: Այսպիսով նա կտրուկ մեծացրել է հնարավոր ընթերցողների բանակը՝ ներառելով երեխաներին, պատանիներին, ընդհանրապես՝ բոլոր նրանց, ովքեր նորադարձ են, անծանոթ կամ ոչ քաջածանոթ Ավետարանին, ինչպես նաև անգլիացի մեծ դասականի՝ Չարլզ Դիքենսի երկրպագուն են և այլն:

վեց Հիսուս Քրիստոսը: Այնտեղ չկար ո՛չ օրորոց, ո՛չ էլ նման մի բան, ուստի Մարիամը պառկեցրեց իր սիրունիկ փոքրիկ Մանչուկին մսուր կոչվող ձիերի կերատաշտակի մեջ: Այդտեղ էլ Նա քնեց:

Մինչ Նա քնած էր, մի քանի հովիվ, որոնք հսկում էին դաշտում արածող ոչխարներին, տեսան Աստծուց ուղարկված հրեշտակի՝ տեղով լույս ու սքանչելիք, որ խոտերի վրայով շարժվում, գալիս էր նրանց ընդառաջ: Հենց տեսան, վախեցած հովիվները գետնամած ընկան երեսնիվայր: Սակայն հրեշտակն ասաց. «Այստեղից ոչ հեռու՝ Բեթղեհեմ քաղաքում, այսօր մի Մանուկ ծնվեց, Ով կաճի ու հասակ կառնի՝ դառնալու այնքան բարի, որ Աստված կսիրի Նրան որպես իր հարազատ Որդուն. ու Նա կսովորեցնի մարդկանց սիրել միմյանց, և ոչ թե վիճել ու վիրավորել մեկմեկու, և Նրա անունը կլինի Հիսուս Քրիստոս. և մարդիկ այդ Անունով կաղոթեն, քանզի կիմանան, որ Աստված սիրում է Նրան, և իրենք էլ պիտի Նրան սիրեն»: Հետո հրեշտակն ասաց հովիվներին, որ գնան այդ փարախն ու տեսնեն այդ փոքր Մանկանը մսուրում: Նրանք այդպես էլ արեցին. տեսնելով Նրան քնած՝ ծնկի իջան ու ասացին. «Աստված օրհնի՛ այս Մանկանը»:

Արդ, այդ երկրի կարևորագույն քաղաքն էր Երուսաղեմը, ինչպես, ասենք, Լոնդոնն է Անգլիայի մեծագույն քաղաքը, և Երուսաղեմում էր ապրում արքան, որի անունն էր Հերովդես: Մի օր հեռավորարևելյան երկրից եկան իմաստուններ և ասացին արքային. «Երկնքում մի աստղ ենք մենք տեսել ու նրա շնորհիվ իմացել, որ Բեթղեհեմում մի Մանուկ է ծնվել, Ով մեծանալով՝ դառնալու է փառավոր Մարդ, որին սիրելու են բոլոր մահկանացուները»: Երբ Հերովդես արքան լսեց այս, շատ նախանձեց, քանի որ չար մարդ էր, բայց ձևացավ հակառակը և ասաց Արևելքի իմաստուններին. «Որտե՞ղ է այդ երեխան»: Եվ իմաստունները պատասխանեցին. «Մենք չգիտենք, բայց կարծում ենք, որ այն աստղը կառաջնորդի մեզ, քանի որ մինչև այստեղ՝ ողջ ճանապարհի ընթացքում, այն ընթանում էր առջևից, և դեռ հիմա էլ երկնքում է»: Այդժամ Հերովդեսը պատվիրեց նրանց իմանալ, թե աստղը ցույց տա Մանկան

գտնվելու վայրը՝ հրամայելով, որ գտնելու դեպքում վերադառնան իր մոտ: Թողնելով նրան՝ իմաստունները մի փոքր էլ գնացին իրենց գլխավերևում փայլող աստղի հետևից, մինչև որ այն կանգ առավ այն տան վրա, որտեղ ապրում էր Մանուկը: Սա մեծ հրաշալիք էր՝ Աստծո կամոք կատարված հրաշք:

Երբ աստղը կանգ առավ, իմաստունները մտան ներս և տեսան Մանկանն իր մայրիկի՝ Մարիամի հետ: Նրանք շատ սիրեցին Մանկիկին և տվեցին նրան որոշ նվերներ: Դրանից հետո նրանք գնացին այդտեղից, սակայն չվերադարձան Հերովդես արքայի մոտ, որովհետև կռահեցին նրա չարանենգությունը, չնայած որ արքան ցույց չէր տվել իր չարությունը: Գիշերով իմաստունները հեռացան իրենց հարազատ երկիրը: Այնուհետև մի հրեշտակ եկավ և խոսեց Հովսեփի ու Մարիամի հետ. «Վերցրեք Մանկանն ու փախեք Եգիպտոսի երկիրը, այլապես Հերովդեսը կսպանի Նրան»: Ու նրանք ևս՝ հայրը, մայրն ու Մանուկը, մեկնեցին գիշերով և բարեհաջող հասան տեղ:

Բայց երբ այս դաժան արքան՝ Հերովդեսը, համոզվեց, որ իմաստուններն այլևս հետ չեն գա իր մոտ, իսկ ինքը չի էլ կարողանա պարզել, թե որտեղ է ապրում մանուկ Հիսուս Քրիստոսը, կանչեց իր զորականներին ու զորապետերին և հրամայեց նրանց գնալ ու սպանել իր տիրույթներում ապրող բոլոր այն մանուկներին, որոնց տարիքը բարձր չէր երկու տարեկանից: Չար զինականներն այդպես էլ արեցին: Երեխաների խելակորույս մայրերը վազում էին փողոցներն ի վեր–ի վայր, գրկած իրենց բալիկներին, փորձելով փրկել նրանց՝ թաքցնելով քարայրերում ու նկուղներում, սակայն անօգուտ: Սուսերակիր զինվորներն ում գտան՝ սպանեցին: Այս սոսկալի մանկասպանությունը կոչվեց «Անմեղների կամ Մանուկների ջարդ». չէ՞ որ փոքրիկ մանուկներն այնքա՜ն անմեղ էին:

Հերովդես արքան հուսով էր, որ սպանվածներից մեկն էլ Հիսուս Քրիստոսն էր: Բայց Նա ողջ էր, ինչպես գիտեք, քանզի Նա ապահով հեռացել էր Եգիպտոս: Այնտեղ էլ Նա իր հոր և մոր հետ ապրեց այնքան, մինչև որ չար թագավոր Հերովդեսը մահացավ:

«Հրեշտակների այցը հովիվներին», 2017 թ., կտավ, յուղ., 180 x 140 սմ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Երբ Հերովդես արքան մեռավ, նորից մի հրեշտակ եկավ Հովսեփի մոտ և ասաց, որ նա հիմա պետք է վերադառնա Երուսաղեմ՝ չվախենալով, որ Մանկանը մի բան կպատահի: Ուստի Հովսեփը, Մարիամն ու իր զավակ Հիսուս Քրիստոսը (սովորաբար նրանց կոչում են «Սրբազան ընտանիք») ուղևորվեցին Երուսաղեմ, բայց ճանապարհին լսելով, որ նոր թագավորը գահ բարձրացած Հերովդես արքայի որդին է, վախեցան, որ նա ևս կուզենա Մանկանը վնաս պատճառել, փոխեցին իրենց ճանապարհը և գնացին Նազարեթ՝ այնտեղ ապրելու: Նրանք ապրեցին այդ քաղաքում մինչև Հիսուսի տասներկու տարեկան դառնալը:

Այդ ժամանակ էր, որ Հովսեփն ու Մարիամը գնացին Երուսաղեմ՝ մասնակցելու մի կրոնական տոնախմբության, որ սովորաբար տեղի էր ունենում այդ օրերին Երուսաղեմի Տաճարում, որը մի մեծ եկեղեցի էր. նրանք իրենց հետ վերցրին Հիսուս Քրիստոսին: Եվ երբ տոնախմբությունն ավարտված էր, նրանք մեծաքանակ բարեկամների ու հարևանների հետ Երուսաղեմից շարժվեցին դեպի տուն՝ Նազարեթ: Այն ժամանակներում, երբ ճանապարհներն այդքան ապահով չէին և չէին հսկվում, ինչպես հիմա, մարդիկ ավազակների ահից սովորաբար ճանապարհորդում էին միասին՝ մեծ խմբերով, և ընդհանրապես, ճանապարհ գնալը շատ ավելի դժվար էր, քան ներկայումս է:

Նրանք ճանապարհ ընկան՝ մի ամբողջ օր այդպես էլ չիմանալով, որ Հիսուս Քրիստոսը նրանց հետ չէր, որովհետև նրանց ընկերախումբն այնքան մեծ էր, որ կարծում էին, թե Նա չի երևում, որովհետև ինչ–որ տեղ՝ մարդկանց մեջ է: Սակայն բացահայտելով, որ Նա այնտեղ չէր, ծնողները, վախեցած, որ կորց-

րել են Նրան, խիստ տագնապահար ու անհանգիստ հետ դարձան Երուսաղեմ՝ Նրան փնտրելու: Եվ Նրան գտան Տաճարում, որ նստած զրուցում էր ուսյալ մարդկանց հետ, որոնք կոչվում էին գիտնական ուսուցիչներ, Նա խոսում էր Աստծո բարության մասին, և թե ինչպես և ինչու ենք բոլորս աղոթելու Նրան: Այս գիտուններն այն չէին, ինչ դուք այսօր հասկանում եք՝ «գիտնական» կամ «ուսուցիչ» ասելով, նրանք անտարբեր էին տկար, կարիքավոր մարդկանց նկատմամբ, որովհետև իրենք իրենց համարում էին լուրջ, խելացի, գիտնական այրեր: Եվ Հիսուս Քրիստոսն այնքա՛ն իմացություն էր ցուցաբերում այն ամենում, ինչ հարցնում էր նրանց կամ էլ պատասխանում, որ նրանք բոլորը մնացել էին ապշահար:

Երբ Հովսեփն ու Մարիամը գտան Նրան, նրանց հետ Նա գնաց տուն և այնտեղ՝ Նազարեթում, ապրեց մինչև երեսուն տարեկան դառնալը:

Այդ ժամանակ ապրում էր մի շատ բարի, իսկապես բարի մարդ, որի անունն էր Հովհաննես, ով Եղիսաբեթի՝ Մարիամի ազգականուհու որդին էր: Եվ քանի որ մարդիկ չար էին, դաժանաբարո և սպանում էին միմյանց՝ բնավ չհիշելով Աստծո նկատմամբ իրենց պարտականությունները, Հովհաննեսը (մարդկանց առավել արդյունավետ ուսուցանելու համար) սկսեց շրջել ողջ երկրով մեկ ու քարոզել տղամարդկանց, կանանց՝ աղաչելով, որ նրանք դառնան ավելի լավը: Եվ քանի որ նրանց սիրում էր առավել, քան իրեն, և չէր էլ մտածում իր մասին, երբ բարիք էր գործում նրանց, ուստի նա ուներ ուղտի կաշվից աղքատիկ հանդերձանք, կերակուրն էլ սուղ էր՝ բաղկացած մորեխ կոչված միջատներից, որոնց նա գտնում էր ճանապարհներին, և վայրի մեղրից, որ թողնում էին մեղուները ծառերի փչակներում:

Դուք երբեք չեք տեսել մորեխ, որովհետև նրանք հանդիպում են այն երկրում, որտեղ Երուսաղեմն է, և շատ հեռու է այստեղից: Այնտեղ են նաև ուղտերը, բայց ես կարծում եմ, որ դուք ուղտ տեսել եք: Բոլոր դեպքերում, ժամանակ առ ժամանակ նրանք այս-

տեղ են բերվում, և եթե դուք ցանկանաք ուղտ տեսնել, ես ձեզ ցույց կտամ:

Երուսաղեմից ոչ շատ հեռու կա մի գետ, որը կոչվում է Հորդանան, այդ գետում Հովհաննեսը մկրտում էր այն մարդկանց, որոնք դիմում էին իրեն և խոստանում մեղքերից հրաժարվել: Մեծ թվով մարդիկ էին այցելում նրան հոծ խմբերով: Հիսուս Քրիստոսն էլ գնաց: Բայց երբ Հովհաննեսը տեսավ Նրան, ասաց. «Ինչու՞ ես պետք է Քեզ մկրտեմ, երբ Դու անհամեմատ ինձնից լավն ես»: Հիսուսն էլ պատասխանեց. «Համաձայնի՛ր հիմա, որ այդպես լինի»: Եվ Հովհաննեսը մկրտեց Նրան: Եվ երբ Նա մկրտվեց, երկինքը բացվեց, և այնտեղից իջավ աղավնու նման մի գեղեցիկ Թռչուն, և լսվեց Աստծո ձայնը, որ ասում էր. «Սա է իմ սիրելի Որդին, Որն արժանացել է իմ բարեհաճությանը»:

Այնուհետև Հիսուս Քրիստոսը գնաց մի վայրի և խստաշունչ վայր, որն անապատ էր, և այնտեղ մնաց քառասուն օր ու քառասուն գիշեր՝ աղոթելով, որ կարողանա օգտակար լինել ժողովրդին և սովորեցնի նրանց, թե ինչպես շտկվեն մեղքերից, որպեսզի իրենց մահից հետո կարողանան երջանիկ լինել Դրախտում:

Երբ Նա դուրս եկավ անապատից, սկսեց բժշկել հիվանդներին՝ լոկ Իր ձեռքը դնելով նրանց վրա, քանզի Աստված Նրան հիվանդներին առողջացնելու, կույրերին տեսողություն տալու և շատ այլ զարմանահրաշ ու խորհրդավոր գործեր կատարելու իշխանություն էր տվել: Դրանց մասին, որոնք կոչվում են «Քրիստոսի հրաշքները», ես ձեզ ավելի շատ կպատմեմ իրենց տեղում: Շատ կուզենայի, որ դուք հիշեիք «հրաշք» բառը. ես այն նորից եմ օգտագործելու, ու կցանկանայի, որ դուք գիտենայիք, որ այն նշանակում է շատ զարմանահրաշ մի բան, որը չի կարող կատարվել առանց Աստծո արտոնության և օգնականության:

Առաջին հրաշքը, որ գործեց Հիսուս Քրիստոսը, Կանա կոչված վայրում էր, որտեղ Նա գնացել էր Մարիամի՝ իր մոր հետ: Այնտեղ գինի չկար, և Մարիամն ասաց Նրան այդ մասին: Այնտեղ կային միայն ջրով լեցուն վեց քարե ջրամաններ: Սակայն

Հիսուսն այդ ջուրը դարձրեց գինի՝ ընդամենը բարձրացնելով Իր ձեռքը, և բոլորը, ովքեր այնտեղ էին, խմեցին այդ գինուց:

Քանի որ Աստված Հիսուս Քրիստոսին տվել էր այսպիսի հրաշքներ գործելու իշխանություն, Նա էլ հրաշագործում էր, որպեսզի մարդիկ իմանային, որ Նա սովորական մարդ չէր, ու հավատային՝ ինչ որ Նա ուսուցանում էր նրանց, նաև հավատային, որ Աստված էր ուղարկել Նրան: Եվ շատ շատերը, լսելով այս ամենը և իմանալով, որ Նա բժշկում է հիվանդներին, սկսեցին հավատալ Նրան, և ուր էլ որ Նա գնար, հսկայական բազմությամբ ժողովուրդը հետևում էր Նրան փողոցներում և ճանապարհներին:

«Նորածնի երկրպագությունը», 2019 թ., կտավ, յուղ., 170 x 125 սմ

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

Որպեսզի Իրեն շրջապատի բարի մարդկանցով՝ պատրաստ գնալու Նրա հետ ժողովրդին ուսուցանելու, Հիսուս Քրիստոսն ընտրեց տասներկու աղքատների՝ Իրեն ընկերակից լինելու համար: Այս տասներկուսը կոչվում են «Առաքյալներ կամ Աշակերտներ». Տերն ընտրեց նրանց աղքատներից, որպեսզի այդուհետ աղքատ մարդիկ մեկընդմիշտ՝ գալիք բոլոր ժամանակներում, գիտենան, որ Դրախտը որքան որ հարուստների համար է ստեղծված, նույնքան էլ՝ իրենց համար, և որ Աստված տարբերություն չի դնում շքեղ հագնվածների և նրանց միջև, ովքեր բոկոտն են և ցնցոտիավոր: Ամենաթշվառ, ամենատգեղ, խեղված ու դժբախտ արարածներն անգամ կդառնան լուսապայծառ հրեշտակներ Երկնքում, եթե նրանք այստեղ՝ երկրում, լինեն բարի:

Երբեք չմոռանաք այս, երբ մեծանաք: Սիրելինե՛րս, երբեք մի՛ հպարտացեք, մի՛ եղեք անբարյացակամ որևիցե աղքատ տղամարդու, կնոջ կամ երեխայի հանդեպ: Եթե նրանցից ոմանք վատն են, ապա մտածեք, որ նրանք ավելի լավը կլինեին, եթե ունենային բարեսիրտ ընկերներ և բարվոք հայրական օջախ, ինչպես նաև եթե ավելի լավ կրթված լինեին: Ուստի միշտ ձգտե՛ք նրանց ավելի լավը դարձնելու ձեր բարի, հորդորիչ խոսքերով և միշտ ջանացե՛ք նրանց սովորեցնել և սփոփել ձեր ուժերի չափով: Եվ երբ մարդիկ վատ բաներ կասեն աղքատների և թշվառների մասին, մտածեք, թե ինչպես էր Հիսուս Քրիստոսը գնում նրանց մոտ և ուսուցանում և կարևորում նրանց՝ արժանին մատուցելով իր հոգատարությամբ: Դուք միշտ կարեկցե՛ք նրանց և ինչքան կարող եք լա՛վը մտածեք նրանց մասին:

Տասներկու առաքյալների անուններն են՝ Սիմոն Պետրոս, Անդրեաս, Զեբեդեոսի որդի Հակոբոս, Հովհաննես, Փիլիպոս, Բարդուղիմեոս, Թովմաս, Մատթեոս, Ալփեոսի որդի Հակոբոս, Թադեոս, Սիմոն և Հուդա Իսկարիովտացի: Վերջինը հետագայում մատնեց Հիսուս Քրիստոսին, ինչպես դուք կիմանաք ավելի ուշ: Սրանցից առաջին չորսն աղքատ ձկնորսներ էին, ովքեր, նստած ծովի ափին իրենց մակույկներում, կարկատում էին իրենց ուռկանները, երբ մոտով անցնում էր Քրիստոսը: Նա կանգնեց, քայլեց դեպի Սիմոն Պետրոսի նավակը և հարցրեց նրան, թե շա՞տ ձուկ է բռնել: Պետրոսը պատասխանեց՝ ոչ: Չնայած որ նրանք քրտնաջան աշխատել էին ողջ գիշերը՝ նետելով ուռկանները, սակայն անարդյունք: Քրիստոսն ասաց. «Նորի՛ց գցեք ուռկանը»: Ձկնորսներն այդպես էլ արեցին, և այն իսկույն լիուլի լցվեց ձկներով, այնպես որ հարկ եղավ կանչել շատերին (որոնք էլ շտապեցին օգնության) ուռկանը ջրից հանելու համար, որը, սակայն, չնայած համատեղ ջանքերին, շատ դժվար եղավ ջրից հանել: Սա Հիսուս Քրիստոսի հրաշքներից մեկ ուրիշն էր:

Այդժամ Հիսուսն ասաց. «Եկե՛ք ինձ հետ»: Եվ նրանք անմիջապես հետևեցին Նրան: Եվ այդ ժամանակից ի վեր տասներկու աշակերտները կամ առաքյալները միշտ Նրա հետ էին:

Քանի որ մարդկային հսկայական զանգվածներ էին Նրան հետևում և փափագում սովորել Նրանից, Տերը բարձրացավ մի լեռան լանջը և այնտեղից քարոզեց նրանց և իր օրհնյալ շուրթերից արտասանեց «Հայր մեր, որ յերկինս ես» խոսքերով սկսվող աղոթքը և տվեց նրանց, որն էլ դուք կարդում եք ամեն գիշեր՝ քնելուց առաջ: Սա կոչվում է Տերունական աղոթք, որովհետև այն առաջինն ասել է Տեր Հիսուս Քրիստոսը, և որովհետև Նա պատվիրեց իր աշակերտներին աղոթել այս խոսքերով:

Երբ Նա իջել էր լեռից, Նրան մոտեցավ բորոտություն կոչված սոսկալի հիվանդությամբ տառապող մի մարդ: Բորը բավականին տարածված էր այն ժամանակներում, և նրանք, որոնք հիվանդ էին այդ հիվանդությամբ, կոչվում էին բորոտներ: Այս

բորոտն ընկավ Հիսուս Քրիստոսի ոտքերն ու ասաց. «Տե՛ր, եթե Դու կամենաս, կարող ես ինձ առողջացնել»: Հիսուսը, որ միշտ լի էր կարեկցանքով, երկարեց իր ձեռքը և ասաց. «Կամենում եմ, առողջացի՛ր»: Եվ բորոտի հիվանդությունն անմիջապես չքացավ. նա բժշկված էր:

Ուր էլ որ գնար, Հիսուսն ամենուրեք շրջապատված էր մարդկանց մեծ բազմությամբ, և ահա իր աշակերտների հետ Նա մտնում է մի տուն՝ հանգստանալու: Մինչ Նա ներսում նստած էր, մի քանի մարդ բերում են մահճի վրա պառկած խիստ կաթվածահար մի անդամալույծի, որը ողջ մարմնով՝ ոտքից գլուխ, դողդողում էր և չէր կարողանում ո՛չ կանգնել, ո՛չ շարժվել: Բայց քանի որ բազմամարդ ամբոխը խոնված էր դռան և լուսամուտների շուրջբոլորը, այդ մարդիկ, չկարողանալով մոտենալ Հիսուս Քրիստոսին, մագլցում են տան կտուրը, որը բարձր չէր, և կղմինդրածածկ տանիքի բացվածքից ներքև են իջեցնում մահիճն անդամալույծի հետ միասին ուղիղ այն սենյակը, որտեղ նստած էր Հիսուսը: Այս բանը տեսնելով՝ գթառատ Հիսուսն ասաց նրան. «Վե՛ր կաց, վերցրու՛ մահիճդ և գնա՛ քո տունը»: Այդ մարդը բարձրացավ ու գնաց լիովին առողջացած՝ օրհնելով նրան ու երախտագիտորեն փառաբանելով Աստծուն:

Այնտեղ էր նաև մի հարյուրապետ (կամ թե նույնն է՝ զինվորականների պետ), ով մոտեցավ Նրան և ասաց. «Տե՛ր, ծառաս պառկած է իմ տանը. նա շատ հիվանդ է»: Հիսուսի պատասխանը եղավ. «Ես կգամ ու կբուժեմ նրան»: Սակայն հարյուրապետն առարկեց. «Տե՛ր, ես արժանի չեմ, որ Դու ոտք դնես իմ տունը. գիտեմ, բավական է, որ Դու ասես, և նա կառողջանա»: Այդժամ Հիսուս Քրիստոսն, ուրախ, որ հարյուրապետն Իրեն հավատում էր այդքան անկեղծորեն, ասաց. «Թող այդպե՛ս լինի»: Եվ այդ իսկ պահից ծառան առողջացավ:

Սակայն բոլոր այն մարդկանցից, ովքեր գալիս էին Նրա մոտ, ոչ մեկն այդքան վշտակիր և տառապալից չէր, որքան մի պաշտոնատար անձ, ով կառավարում էր մեծ թվով մարդկանց: Նա կոտ-

բատում էր իր ձեռքերը, լացում և ասում. «Ո՜վ Տեր, իմ դուստրը՝ իմ սիրուն, բարի, անմեղ փոքրիկ դստրիկս, մեռա՛ծ է: Օ՜հ, արի, արի նրա մոտ և Քո օրհնյալ ձեռքը դիր նրա վրա. ես գիտեմ՝ նա հարություն կառնի, նա հետ կգա՝ ապրելու՝ երջանկացնելով ինձ ու իր մորը: Օ՜հ Տեր, մենք նրան այնքա՛ն ենք սիրում, այնքա՛ն ենք սիրում: Ու նա մեռա՛ծ է»:

Հիսուս Քրիստոսը դուրս ելավ և գնաց նրա հետ, աշակերտներն էլ հետևեցին և մտան նրա տունը, որտեղ՝ այն սենյակում, որտեղ պառկած էր խեղճ փոքրիկ մեռած աղջիկը, լալիս էին բարեկամներն ու հարևանները. և, ինչպես ընդունված էր այդ օրերին, երբ մարդ էր մահանում, հնչում էր մեղմ երաժշտություն: Հիսուս Քրիստոսը տխուր նայեց նրան և, որպեսզի մխիթարի նրա խեղճ ծնողներին, ասաց. «Նա մեռած չէ՛: Նա քնած է»: Հետո Նա կարգադրեց, որ սենյակում գտնվողները ազատեն այն, և մոտենալով մահացած երեխային՝ բռնեց նրա ձեռքը, ու աղջիկը հառնեց. նա հիանալի վիճակում էր, կարծես թե քնած էր ու զարթնեց: Պատկերացնու՞մ եք, թե ինչպիսի՜ տեսարան էր դա. արժեր տեսնել, թե ինչպես էին նրա ծնողները ամուր գրկում և նույնքան ամուր էլ համբուրում նրան և շնորհակալություն հայտնում Աստծուն և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին՝ այսպիսի մեծ Գթության համար:

Սակայն Նա միշտ էր գթասիրտ ու կարեկից: Եվ քանի որ Նա Բարին էր գործում և արարում, և մարդկանց սովորեցնում, թե ինչպես սիրեն Աստծուն և հուսան, որ մահից հետո կգնան Դրախտ, Նրան կոչեցին «Մեր Փրկիչը»:

«Հիսուսի մկրտությունը», 2019 թ., կտավ, յուղ., 170 x 125 սմ

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Այդ երկրում, որտեղ Մեր Փրկիչն իր հրաշքներն էր գործում, կային որոշ մարդիկ, ովքեր կոչվում էին փարիսեցիներ: Սրանք շատ գոռոզ էին և հավատացած, որ իրենցից բացի ոչ ոք լավը չէ: Նրանք բոլորը վախենում էին Հիսուս Քրիստոսից, որովհետև այն, ինչ Նա էր ուսուցանում, շատ ավելի բարի էր և մարդկային, քան փարիսեցիներինը: Ընդհանրապես, այդ երկրի հիմնական բնակիչները հրեաներ էին:

Մի անգամ՝ կիրակնօրյա զբոսանքի ժամանակ (իսկ Կիրակին, երբ մենք հանգստանում ենք և պատվում Աստծուն, հրեաները մինչև օրս էլ կոչում են «Շաբաթ»), երբ Մեր Փրկիչն իր աշակերտների հետ քայլում և ուտելու համար հասկեր էր քաղում ցորենի դաշտերում, փարիսեցիները հայտարարեցին, որ դա սխալ և վատ արարք է: Նույն կերպ էլ, երբ Մեր Փրկիչը գնացել էր հրեաների աղոթատներից մեկը (որոնք կոչվում են սինագոգներ) և այնտեղ կարեկցանքով ու խղճահարությամբ նայում էր մի դժբախտի, որի ձեռքն ամբողջովին չորացած ու անօգնական կախված էր, փարիսեցիները հարցրին Նրան. «Արդյո՞ք ճիշտ է կիրակի օրը մարդկանց բուժելը»: Մեր Փրկիչը պատասխանեց նրանց հետևյալ խոսքերով. «Եթե ձեզնից մեկը ոչխար ունենար և այդ ոչխարն ընկներ փոսը, արդյո՞ք նրան դուրս չէիք բերի, անգամ եթե դա կատարված լիներ կիրակի օրը: Իսկ մարդը որքա՞ն առավել է ոչխարից»: Այնուհետև Նա դիմեց այդ խեղճ մարդուն. «Ձեռքդ պարզի՛ր»: Եվ այն իսկույն բուժվեց՝ դառնալով մյուսի պես ողորկ ու գործունակ: Հետո Հիսուս Քրիստոսը նրանց պատգամեց. «Դուք պե՛տք է միշտ բարին գործեք, մի՛շտ, անկախ այս կամ այն օրից»:

Շուտով՝ այս դեպքից հետո, Մեր Փրկիչն ուղևորվեց Նային կոչված քաղաքը. ճանապարհին Նրան ուղեկցում էին մեծ թվով մարդիկ, հատկապես նրանք, ովքեր ունեին հիվանդ ու ախտահար ազգականներ, ընկերներ կամ երեխաներ: Նրանք բերում էին հիվանդներին այն փողոցների ու ճանապարհների մոտ, որոնցով անցնում էր Նա, և բղավելով աղերսում էին հպվել նրանց, և երբ Նա հպվում էր, հիվանդներն առողջանում էին ու վերականգնվում: Ճեղքելով այս ամբոխը, շարժվելով դեպի քաղաքի դարպասները՝ Նա դեմ ելավ մահվան թափորի: Դա հուղարկավորությունն էր մի պատանու, որին տանում էին ոչ փակ պատգարակով, ինչպես որ ընդունված էր այդ երկրում, իսկ մեր օրերում՝ Իտալիայի մի շարք մասերում: Նրա խեղճ մայրը հետևում էր դագաղ–պատգարակին ու վշտաչարչար արտասվում, որովհետև նա ուրիշ զավակ չուներ: Երբ Մեր Փրկիչը տեսավ նրան այդքան վշտահար, մինչև հոգու խորքը ցնցվեց նրա դժբախտությունից և ասաց. «Մի՛ լացիր»: Պատգարակը կրողները մի պահ կանգ առան. Հիսուսը մոտեցավ նրանց, ձեռքով հպվեց դիակին և ասաց. «Վե՛ր կաց, պատանի՛»: Փրկչի ձայնի հնչյունների ներքո մահացածը վերակենդանացավ, նստեց ու սկսեց խոսել: Ապա Հիսուս Քրիստոսը, թողնելով պատանուն ու իր մորը (ա՜խ, ինչքա՜ն, ինչքա՜ն, երջանիկ էին նրանք), հեռացավ այդտեղից:

Այդ ընթացքում մարդկային ամբոխն այնքան աճեց, որ Հիսուս Քրիստոսն իջավ ծովափ՝ այնտեղ նավակով մի ավելի մեկուսի վայր հեռանալու համար: Ճանապարհին նավակում Նա քնեց, մինչդեռ աշակերտները նստած էին տախտակամածին: Նա դեռ քնած էր, երբ այնպիսի մի ահավոր փոթորիկ բարձրացավ, որ բարձր ալիքները լցվում էին նավակի մեջ, իսկ ոռնացող քամին այնքա՜ն ուժգին էր ցնցում ու տարուբերում այն, որ բոլորը մտածեցին, որ նավակը կխորտակվի: Վախեցած ու սարսափահար՝ աշակերտներն արթնացրին Մեր Փրկչին՝ ասելով. «Տե՛ր, փրկի՛ր մեզ, այլապես մենք կորա՜ծ ենք»: Ու Նա կանգ-

նեց, բարձրացրեց իր ձեռքը և ասաց ալեխոով ծովին ու սուլող, սուրացող քամուն. «Հանդա՛րտ։ Խաղաղվի՛ր»։ Եվ անմիջապես եղավ անդորր ու հաճելի եղանակ, իսկ նավակն ապահով կերպով շարունակեց իր բարեհաջող ընթացքը հանդարտ ջրերի վրայով։

Երբ նրանք հասան հանդիպակաց ափը, ստիպված էին անցնել մի ամայի ու լքյալ գերեզմանոցի միջով, որն իրենց նպատակատեղի քաղաքից քիչ հեռու էր։ Բոլոր գերեզմանոցներն էլ այդ ժամանակ բնակավայրերից դուրս էին։ Այդ վայրում կար մի ահավոր կատաղի խելագար, ով ապրում էր գերեզմանների մեջ։ Նա կաղկանձում էր օր ու գիշեր, և լսելով նրան՝ ճանապարհորդները վախենում էին և զարհուրում։

Ոմանք փորձում էին շղթայել նրան, սակայն նա կտրում էր իր շղթաները՝ այնքան որ ուժեղ էր, հետո նետվում էր սուր–սուր քարերի վրա՝ ինքզինքը հասցնելով սարսափելի վերքեր ու վնասվածքներ, ամբողջ ընթացքում գոռալով և կաղկանձելով։ Երբ այս թշվառականը հեռվից տեսավ Հիսուս Քրիստոսին, ճչաց. «Սա Աստուծո Որդին է։ Օ՜հ, Աստծո՛ Որդի, մի՛ տանջիր ինձ»։ Հիսուսը, մոտենալով նրան, հասկացավ, որ նա բռնված էր պիղծ ոգուց, և նրանից դուրս վռնդեց մոլագարության ոգուն դեպի մոտակայքում արածող խոզերի բոլուկը, որոնք դիվահար՝ վազեցին ուղիղ դեպի ծովեզերքի զառիթափը, որտեղից էլ ընկնելով՝ ջարդուկտոր եղան։

Արդ, Հերովդեսը, որ թագավորում էր այդտեղ՝ որդին այն դաժան արքայի, ով սպանել էր անմեղ մանուկներին, լսելով, որ Հիսուս Քրիստոսն այսքա՛ն հրաշքներ էր գործում՝ կույրերին տեսողություն տալով, խուլերին՝ լսողություն, համրերին՝ ստիպում խոսել, իսկ կաղերին՝ քայլել, և որ Նրա հետևից գնում էին բյուր–բյուրավոր մարդիկ, այս ամենը լսելով՝ Հերովդեսն ասաց. «Այս մարդը Հովհաննես Մկրտչի գործակիցն ու բարեկամն է»։ Ինչպես հիշում եք, Հովհաննեսը բարի մարդ էր, ով հագնում էր ուղտի մազեղեն հագուստ և ուտում վայրի մեղր։ Հերովդեսը նրան

բանտարկել էր, քանզի նա ուսուցանում և քարոզում էր ժողովրդին, և պահում էր իր պալատի զնդանում:

Եվ ահա մոտեցավ Հերովդեսի ծննդյան օրը (իսկ Հովհաննեսը դեռ բանտում էր նրա ցասման պատճառով), և Հերովդիադան՝ նրա դուստրը, որ հիանալի պարուհի էր, պարեց՝ նրան ուրախացնելու համար: Նա այնքան հաճոյացավ հորը, որ վերջինս երդվեց նրան տալ այն ամենը, ինչ կկամենար: «Այդ դեպքում,— պահանջեց նա,— տո՛ւր ինձ Հովհաննես Մկրտչի գլուխը մեծ սկուտեղի վրա»: Նա այդպես ասաց իր մոր դրդմամբ, որը, նենգ ու դաժան կին լինելով, ատում էր Հովհաննեսին:

Արքան շատ տխրեց, քանզի չնայած որ Հովհաննեսին պահում էր բանտում, չէր ցանկանում սպանել նրան, սակայն քանի որ նա երդվել էր դստերը տալ նրա ուզածը, ուղարկեց զինվորներին զնդան՝ հրամայելով, որ գլխատեն Հովհաննես Մկրտչին և գլուխը հանձնեն Հերովդիադային: Զինվորներն այդպես էլ արեցին՝ աղջկա ուզածի պես՝ դնելով նրա գլուխը մեծ սկուտեղի վրա, որն, ինչպես գիտեք, սպասքի մի տեսակ է: Երբ Հիսուս Քրիստոսն իմացավ առաքյալներից այս դաժան արարքի մասին, Նա լքեց այդ քաղաքը և նրանց հետ գնաց մեկ ուրիշ վայր (այն բանից հետո, երբ նրանք թաքուն գիշերով հողին հանձնեցին Հովհաննեսի մարմինը):

«Հիսուսի պայծառակերպությունը», 2013 թ., կտավ, յուղ., 180 x 140 սմ

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Փարիսեցիներից մեկը շատ խնդրեց Մեր Փրկչին մտնել իր տունը՝ միասին մի բան ուտելու համար: Եվ մինչ Մեր Փրկիչը, սեղանի մոտ նստած, ուտում էր, ներս սողոսկեց վատ և մեղավոր կենցաղավարություն ունեցող մի կին այդ քաղաքից, որն ամաչում էր Աստծո Որդու աչքին երևալուց: Այնուամենայնիվ, այդ կինն այնքան էր վստահում Նրա բարությանն ու կարեկցանքին բոլոր նրանց հանդեպ, ովքեր, սխալ գործելով, ի սրտե և անկեղծորեն զղջում էին դրա համար, որ քիչ առ քիչ հանդգնելով՝ նա շրջանցեց այն նստարանը, որի վրա նստած էր Հիսուսը, և ծնկաչոք ընկնելով՝ իր դառնաղի արցունքներով ցողում էր Նրա ոտքերն ու համբուրում, ապա չորացնում իր երկար մազերով և օծում իր հետ բերած անուշաբույր յուղով: Նրա անունն էր Մարիամ Մագդաղենացի:

Երբ տանուտեր փարիսեցին տեսավ, որ Հիսուսը թույլ տվեց այդ կնոջը դիպչել Իրեն, ինքն իրեն մտածեց, թե Հիսուսը չիմացավ, թե որքա՛ն մեղսակենցաղ է նա եղել: Սակայն Հիսուս Քրիստոսը, որ գիտեր նրա մտքերը, ասաց նրան. «Սիմո՛ն (այդ էր նրա անունը), եթե մի մարդ ունենա պարտապաններ, որոնցից մեկը պարտքով նրանից հինգ հարյուր արծաթադրամ էր վերցրել, իսկ մյուսը վերցրել էր լոկ հիսուն արծաթադրամ, ու նա երկուսին էլ ների նրանց պարտքերը, ո՞րն այս երկուսից, քո կարծիքով, ավելի շատ կսիրի նրան»: Սիմոնը պատասխանեց. «Կարծում եմ, այն մեկը, ում նա շատ ներեց»: Հիսուսը նկատեց, որ նա ճիշտ է, և ասաց. «Քանի որ Աստված ներում է այս կնոջ այդքա՛ն շատ մեղքերը, նա՛ էլ, հուսով եմ, Աստծուն շատ կսիրի»: Եվ դառնալով նրան՝ Տերն ասաց. «Աստված ներո՛ւմ է քեզ»: Ներկա գտնվող սե-

ղանակիցները զարմացան, որ Հիսուս Քրիստոսն իշխանություն ուներ մեղքերը ներելու, բայց այդ Նրան էր տվել Աստված: Եվ կինը, հայտնելով իր երախտագիտությունը Նրան բոլոր այդ ողորմությունների համար, գնաց այդտեղից:

Այստեղից մենք դաս ենք քաղում, որ նույն կերպ էլ մենք միշտ պիտի ներենք երբևէ մեզ որևէ վատություն անողներին, երբ նրանք գան ու մեզ խոստովանեն, որ իսկապես զղջում են արածի համար: Անգամ եթե նրանք չգան ու չզղջան, մենք, այնուամենայնիվ, պետք է ներենք և երբեք չատենք նրանց, և չլինենք չարակամ նրանց հանդեպ, եթե հույս ենք տածելու, որ Աստված մեզ կների:

Այս դեպքից հետո եկավ հրեաների մեծ տոնը, և Հիսուս Քրիստոսը մեկնեց Երուսաղեմ: Այնտեղ, ոչխարների շուկայի մոտ, կար մի ջրամբար կամ ավազան, որն ուներ հինգ մուտքի դարպաս և կոչվում էր Բեթհեզդա: Եվ տարվա այդ տոն օրերին հիվանդների և անդամալույծների ահռելի մեծ բազմություն էր այցելում այդ ջրավազանը՝ լողանալու մտադրությամբ, հավատալով, որ մի հրեշտակ, հանկարծակի իջնելով, խառնում, խռովում էր ջուրը, և ով էլ որ հրեշտակի ալեկոծումից հետո առաջինն իջներ ջուրը, անպայման կբուժվեր իր հիվանդությունից, որքան էլ որ այն ծանր լիներ: Այս տարաբախտ մարդկանց մեջ կար մեկը, ով հիվանդ էր երեսունութ տարի. նա պատմեց Հիսուս Քրիստոսին (Ով նրան շատ խղճաց, երբ տեսավ նրան պառկած իր հիվանդության մահճին, միայնակ, առանց որևէ մեկի օգնության), որ երբեք չէր կարողացել հայտնվել ջրավազանում, որովհետև այնքան թույլ էր և տկար, որ չէր կարողանում շարժվել և հասնել այնտեղ: Մեր Փրկիչն ասաց նրան. «Վե՛ր կաց, ա՛ռ մահիճդ և գնա՛»: Եվ նա գնաց՝ ողջ և առողջ: Շատ հրեաներ սա տեսան, և դրանից հետո նրանք առավել ատեցին Հիսուս Քրիստոսին, գիտենալով, որ Նրա կողմից բուժված և ուսուցանված մարդիկ այդուհետ չէին հավատալու իրենց քահանաներին, որոնք մարդկանց քարոզում էին կեղծիքը և խաբում նրանց, ուստի ասում էին

մեկը մյուսին, որ Հիսուս Քրիստոսը պետք է սպանվի, քանզի Նա բժշկում էր մարդկանց Շաբաթ օրը (ինչը հակառակ էր նրանց խիստ օրենքին) և Իրեն կոչում Աստծո Որդի: Եվ նրանք ջանում էին Նրա դեմ գրգռել, հանել թշնամիներ և փողոցներում ամբոխին հրահրել Աստծո Որդու սպանության:

Բայց ուր էլ Նա գնար, ժողովուրդը հետևում էր Նրան՝ թախանձելով, որ իրենց բժշկի և ուսուցանի, ժողովուրդն օրհնում էր Նրան՝ գիտենալով, որ բացի բարությունից՝ Նա ոչինչ չէր գործում: Արդ, գնալով դեպի Տիբերական կոչված ծովի եզերքը՝ Հիսուսն իր աշակերտների հետ նստեց մի բլրի լանջին և, տեսնելով խեղճ, հոգնատանջ մարդկանց հսկայական բազմություն, որոնք տեղավորվել և սպասում էին ներքևում, ասաց Փիլիպոս առաքյալին. «Որտեղի՞ց հաց գնենք, որպեսզի նրանք ուտեն և թարմանան իրենց երկարատև ճամփորդությունից հետո»: Փիլիպոսը պատասխանեց. «Տե՛ր, եթե անգամ քսան արծաթադրամի հաց էլ գնենք, այսքան շատ մարդկանց չի բավականացնի, իսկ մենք մեկ դրամ իսկ չունենք»: Մյուս առաքյալը՝ Անդրեասը՝ Սիմոն Պետրոսի եղբայրը, ավելացրեց. «Մեր մեջ մի ջահել կա, որն ունի հինգ փոքրիկ գարեհաց և երկու փոքր ձուկ՝ ահա մեր ողջ ունեցածը. սակայն ի՞նչ են դրանք այսքա՞ն շատ մարդկանց համար»: Հիսուս Քրիստոսն ասաց. «Նրանց բոլորին ասեք, որ նստեն»: Մարդիկ նստեցին գետնին. այդտեղ խիտ կանաչ խոտ էր աճում: Երբ բոլորը նստած էին, Հիսուսը վերցրեց հացը, հայացքը հառեց երկինք և օրհնելով բեկանեց հացը և մաս–մաս այն տվեց առաքյալներին, որոնք էլ, իրենց հերթին, բաժանեցին մարդկանց: Եվ այդ հինգ փոքրիկ գարեհացը և երկու ձուկը հինգ հազար տղամարդ, չհաշված կանայք և երեխաները, կերան, ու այն չպակասեց. և երբ բոլորը հագեցել էին, հավաքեցին մնացորդները տասներկու կողովների մեջ լեփ–լեցուն: Սա Հիսուս Քրիստոսի հրաշքներից ևս մեկն էր:

Այնուհետև Մեր Փրկիչն ուղարկեց իր աշակերտներին՝ ճանապարհելով ծովով՝ մակույկով, ասելով, որ կհետևի նրանց օր-

վա ընթացքում՝ ժողովրդին արձակելուց հետո: Երբ մարդիկ ցրվեցին, Նա մնաց մեկուսի՝ աղոթելու համար. և ահա վրա հասավ գիշերը, աշակերտները շարունակում էին թիավարել և մակույկով ընթանալ քամուն ընդառաջ բարձրակոհակ, սլացող ալիքների միջով՝ շփոթահար մտածելով, թե երբ է Քրիստոսն իրենց հասնելու: Ուշ գիշերին նրանք տեսան Տիրոջը, Ով գալիս էր դեպի իրենց՝ քայլելով ջրի վրայով, ասես այն ցամաք լիներ: Երբ նրանք այս տեսան, նրանց համակեց վախն, ու նրանք ճչացին, սակայն Հիսուսն ասաց. «Ես եմ, մի՛ վախեցեք»: Պետրոսը, քաջությամբ տոգորված, ասաց. «Տե՛ր, եթե այդ Դու ես, ասա՛ ինձ, որ դեպի Քեզ գամ ջրերի վրայով»: Հիսուս Քրիստոսն էլ կանչեց. «Արի՛»: Եվ Պետրոսը քայլեց դեպի Նա, բայց տեսնելով ամեհի ալիքները և լսելով քամու ոռնոցը՝ վախեցավ և սկսեց ընկղմվել և կսուզվեր էլ, սակայն Հիսուսը հասավ, բռնեց նրա ձեռքից և տարավ մակույկը: Այդժամ քամին հանդարտվեց, իսկ աշակերտներն ասում էին մեկմեկու. «Ճշմարիտ որ Նա Աստծո Որդի՛ն է»:

Հիսուսն այս դեպքերից հետո կատարեց շատ հրաշքներ ևս, և շատ ու շատ ախտաժետների բժշկեց՝ կաղերին տալով առողջ քայլք, համրերին շնորհելով խոսք, իսկ կույրերին օժտելով տեսողությամբ: Եվ ահա նորից՝ շրջապատված մեծաթիվ մարդկանցով, որոնք Նրա հետ համարյա առանց սնվելու անցել էին երեք օրվա ճանապարհ և ուժասպառ էին ու քաղցած, Նա վերցնում է իր աշակերտներից յոթ նկանակ հաց ու մի քանի ձուկ և բաժանում այսքանը հավաքվածներին՝ թվով չորս հազար: Նրանք բոլորն էլ կերան ու հագեցան, իսկ հավաքած մնացորդներով յոթ կողովներ լցվեցին բերնեբերան:

Հետո Նա իր աշակերտներին առանձին–առանձին ուղարկեց շատ քաղաքներ ու գյուղեր մարդկանց քարոզելու առաքելությամբ՝ տալով նրանց Աստծո անվամբ բոլոր հիվանդներին բժշկելու իշխանություն: Այս անգամ Նա սկսեց խոսել նրանց հետ (քանզի Տերը գիտեր կատարվելիքը) այն մասին, որ մի օր պետք է վերադառնա Երուսաղեմ, որտեղ շատ կտառապի և հաստատ

կդատապարտվի մահվան: Եվ նրանց ասաց, որ իր մահից հետո՝ երրորդ օրը, Նա հարություն կառնի ու կհառնի գերեզմանից ու կհամբարձվի Երկինք, որտեղ կնստի Աստծո աջ կողմը՝ բարեխոսաբար խնդրելով Աստծո ներողամտությունը մեղավորների հանդեպ:

«Ռաֆայելը», 2020 թ., կտավ, յուղ., 170 x 135 սմ

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Այս վերջին՝ հացի և ձկների բազմացման հրաշքից հետո Հիսուս Քրիստոսը բարձրացավ մի բարձր լեռ աշակերտներից միայն երեքի՝ Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի հետ: Եվ այնտեղ, երբ խոսում էր նրանց հետ, Նրա դեմքը հանկարծ սկսեց փայլել այնպես՝ ինչպես արևն է շողում, իսկ զգեստները շողարձակում էին սպիտակին փայլող և շողշողացող արծաթի նման, ու Նա կանգնած էր երեքի դիմաց հրեշտակի պես: Այդ պահին հայտնվելով մի լուսաճաճանչ ամպի ներքո՝ նրանք լսեցին մի ձայն այնտեղից, որ ասում էր. «Ահա Իմ սիրելի Որդին, Որի հետ է Իմ ողջ հաճությունը: Լսե՛ք Նրան»: Այդ Խոսքից աշակերտները վախեցած՝ փութով ծնկի իջան ու ծածկեցին իրենց երեսները: Սա կոչվում է Մեր Փրկչի Այլակերպությունը:

Երբ նրանք իջել էին այս սարից և նորից մարդկանց մեջ էին, մի մարդ, ընկնելով Հիսուսի ոտքերը, ծնկաչոք աղաչում էր. «Տե՛ր, ողորմի՛ր որդուս, նա խելագար է և անկարող ինքնակառավարման. ժամանակ առ ժամանակ նա նետվում է հրի կամ ջրի մեջ՝ իրեն պատելով վատ սպիներով և վիրալից խոցերով: Քո աշակերտներից ոմանք փորձեցին բուժել նրան, սակայն չկարողացան»: Մեր Փրկիչն անմիջապես բժշկեց դեռահաս տղային և, դառնալով աշակերտներին, ասաց, որ նրանք չկարողացան ինքնուրույն բուժել նրան, որովհետև Իր հուսացածի չափով ճշմարտորեն չէին հավատացել Իրեն:

Աշակերտները հարցրին Նրան. «Տե՛ր, ո՞վ է ամենամեծը Երկնքի Արքայությունում»: Հիսուսն իր մոտ կանչեց մի փոքր երեխայի, գրկեց նրան և, իջեցնելով նրանց խմբի մեջ, պատասխանեց. «Ասում եմ ձեզ, որ ոչ ոք չի գնա Երկինք, բացի նրանցից,

ովքեր համեստ են ու հեզ, ինչպես փոքր երեխաները: Եթե մեկն ընդունի այսպիսի մի փոքր երեխայի հանուն Ինձ՝ Ինձ կընդունի: Սակայն երբ ինչ–որ մեկը փոքրիկներից մեկին վնասի, ապա լավ կլիներ, որ մինչ այդ մի ծանր քար կապվեր նրա վզին, ու նա ծովում ջրասույզ լիներ մինչև հատակ: Բոլոր հրեշտակները երեխաներ են»: Մեր Փրկիչն այդ երեխային սիրեց. Նա սիրում էր բոլոր երեխաներին: Այո՛, նաև ողջ աշխարհը: Երբևէ որևիցե մեկը չի սիրել մարդկանց այդքան ճշմարիտ ու անկեղծ, որքան Նա:

Պետրոսը Նրան հարցրեց. «Տե՛ր, ինչքա՞ն է կարելի ներել մեկին, ով նեղացնում է ինձ: Յո՞թ անգամ»: Մեր Փրկիչը պատասխանեց. «Յոթանասուն անգամ յոթ ու դեռ ավելի անգամներ: Այլապես ինչպե՞ս՝ ինքներդ չներելով, կարող եք հուսալ, որ Աստված կների ձեզ, քանի դեռ դու՛ք չեք ներել մյուս բոլոր մարդկանց»:

Եվ Նա իր աշակերտներին պատմեց հետևյալ պատմությունը. «Ժամանակին կար մի ծառա,— Նա ասաց,— ով իր տիրոջից պարտքով վերցրել էր մեծ քանակությամբ ոսկեդրամներ և չէր կարողանում դրանք վերադարձնել, ինչի պատճառով էլ նրա տերը, շատ զայրացած, պատրաստվում էր վաճառել ծառային ստրկության: Սակայն ծառան ծնկաչոք, մեծ վշտով տիրոջից աղերսեց գութ ու ներում, և տերը ներեց նրան: Հիմա տեսեք. այս նույն ծառան, որին ծառայակից, բախտակից մեկը պարտք էր հարյուր պղնձադրամ, փոխանակ բարեգութ գտնվելու ու ներելու այդ խեղճ մարդուն, ինչպես որ իր տերն իր հանդեպ գտնվեց, նրան բանտ է նետում պարտքի պատճառով: Ու նրա տերը, այս մասին լսելով, գնաց նրա մոտ ու ասաց. «Ո՜վ չար ծառա, ես քեզ ներեցի. Դու՞ ինչու չներեցիր քո ծառայակից ընկերոջը»: Եվ քանի որ ծառան չէր ներել, տերը նրան արտաքսեց ձեռնունայն, թշվառ ու ընչազուրկ: «Ուրեմն,— ասաց Մեր Փրկիչը,— դուք ինչպե՞ս կարող եք ակնկալել Աստծո ներումը, եթե ինքներդ չե՞ք ներում այլոց»: Սա Տերունական աղոթքի այն հատվածի իմաստն է, որտեղ մենք, ի դեպ, չենք աղոթում «Եվ թող մեր պարտքերը, ինչպես որ մենք ենք թողնում մեր պարտքերը», որ կլիներ սխալ, այլ՝ «Եվ

թող մեր պարտքերը, ինչպես որ մենք ենք թողնում մեր պարտապաններին»:

Հետո Նա պատմեց նրանց մեկ այլ պատմություն՝ նորից առակաբանելով. «Կար մի ագարակատեր, ով ուներ խաղողի այգի. վաղ առավոտյան դուրս գալով՝ նա պայմանավորվում է մի քանի մշակների հետ, որ նրանք մեկ արծաթադրամ օրավարձով ամբողջ օրն աշխատեն այգում: Քիչ ավելի ուշ նա նորից է դուրս գալիս և գործի մեջ ներգրավում ևս մի քանի մշակների նույն պայմանով: Հետո նորից դուրս գալով, նա կնքում է նույն գործարքը. և այսպես՝ մի քանի անգամ, մինչև ճաշաժամ: Օրվա վերջում բոլորն էլ եկան իրենց վարձքը ստանալու. նրանք, որ աշխատել էին վաղ առավոտից, դժգոհեցին, որ վաղորդայնից չսկսողներն էլ ստացան այն նույն գումարն, ինչ իրենք, նկատելով, որ դա արդարացի չէ: Բայց ագարակատերը պատասխանեց. «Ընկեր, ես համաձայնեցի քեզ տալ մեկ արծաթադրամ. արդյո՞ք այն քիչ է քեզ մեկ ուրիշին նույնչափ վարձատրելու պատճառով»:

Առակաբար խոսելով՝ Մեր Փրկիչը մտադիր էր նրանց ուսուցանելու, որ այն մարդիկ, ովքեր բարին են գործել իրենց ողջ կյանքի ընթացքում, մահանալուց հետո կգնան Դրախտ: Բայց և նրանք, ովքեր մեղանչել են կյանքում իրենց թշվառ գոյության կամ էլ պատանի հասակում հոգատար ու խնամատար ծնողներից և ընկերներից զուրկ լինելու պատճառով, ինչքան էլ որ ուշացած դառնան Աստծուն և Նրանից ներում խնդրեն՝ անկեղծորեն զղջալով գործած մեղքերի համար, անշուշտ, կներվեն և նույնպես կգնան Դրախտ: Նա ուսուցանում էր իր աշակերտներին այսպիսի պատմություններով, քանզի գիտեր, որ մարդիկ սիրում են դրանք լսել և ավելի լավ կհիշեն Իր Խոսքերը, եթե մատուցվեն այդ եղանակով: Պատմություններն այդ կոչվում են առակներ՝ ՄԵՐ ՓՐԿՉԻ ԱՌԱԿՆԵՐԸ. կցանկանայի, որ դուք մտապահեիք այս բառը, որովհետև ես շուտով ձեզ պատմելու եմ մի քանի առակ ևս:

Մարդիկ լսում էին այն ամենն, ինչ ասում էր Մեր Փրկիչը, բայց Նրա Անձի շուրջ նրանք համակարծիք չէին: Փարիսե-

ցիներն ու հրեաները խոսել էին ոմանց հետ, ովքեր Նրան դեմ էին և տրամադրված Նրան վնասելու և անգամ սպանելու: Բայց առայժմ նրանք վախենում էին Տիրոջը որևէ վնաս պատճառելուց Նրա բարության պատճառով, և որովհետև Նրա տեսքն այնքան աստվածային էր և մեծավայելուչ՝ չնայած Նրա շատ հասարակ, համարյա աղքատաբար հագնվելուն, որ չարամիտները հազիվ թե կարողանային դիմանալ Տիրոջ ակն հանդիման հայացքին:

Մի առավոտ Ձիթենյաց լեռ կոչված վայրում նստած Նա ուսուցանում էր Իր շուրջը խմբված ականջալուր և ուշադիր սերտող մարդկանց, երբ լսվեց մեծ աղմուկ. դա փարիսեցիների ու սրանց նմանների՝ դպիր հորջորջվածների հախուռն ամբոխն էր, որ ոգևորված իրարանցմամբ ու հարայհրոցով թափով մոտենում էր նրանց՝ քարշ տալով մի կնոջ, ով սխալ էր գործել՝ միաբերան պոռալով. «Ուսուցի՛չ, նայի՛ր այս կնոջը. օրենքն ասում է, որ նա պետք է քարաջարդ լինի ու մեռնի: Բայց Դու՞ ինչ կասես: Իսկ Դու ի՞նչ կասես»:

Հիսուսն ուշադիր նայեց այդ աղմկոտ խառնամբոխին՝ գիտենալով, որ նրանք հայտնվել էին, որպեսզի ստիպեն Իրեն ասել, որ օրենքը սխալ ու անողորմ է, ու խոսքերն այս լսելու դեպքում օրինազանցության մեղադրանքը բարդելով՝ սպանեն Իրեն: Նրանք կանգնել էին Հիսուսի դիմագրավ հայացքի առաջ՝ վախվորած ու ամոթից ակնկոր, բայց, շարունակում էին բղավել. «Արի՛, Ուսուցի՛չ, Դու՞ ինչ կասես, ի՞նչ կասես»: Հիսուսը կռացավ գետնին ու մատով գրեց ավազի վրա. «Ձեր մեջ ով որ առանց մեղքի է, թող առաջին քարը նետի նրա վրա»: Մեկը մյուսի ուսերի վրայով ձգվելով՝ բոլորն էլ կարդացին գրվածը, և երբ Նա դիմեց նրանց՝ կրկնելով նույն բառերը, հավաքվածներն ամոթահար, մեկ առ մեկ, մինչև աղմկաշատ ամբոխի վերջին մարդը ցրվեցին. մնացին միայն Հիսուս Քրիստոսն ու երեսն ափերի մեջ թաքցրած կինը:

Այդժամ Հիսուս Քրիստոսը հարցրեց. «Ո՛վ կին, ու՞ր են քո մեղադրողները: Չկա՞ մեկը, որ քեզ ամբաստանի»: Նա պատասխանեց դողալով. «Ո՛չ, Տեր»: Եվ ասաց Մեր Փրկիչը. «Ես էլ չեմ մեղադրում քեզ: Գնա՛ և այլևս մի՛ մեղանչիր»:

«Մշո ճառընտիր», 2016 թ., կտավ, յուղ., 160 x 140 սմ

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Մի անգամ, երբ Մեր Փրկիչը նստած՝ ուսուցանում և պատասխանում էր մարդկանց հարցերին, մի օրենսգետ կանգնեց ու հարցրեց. «Տե՛ր, ես ի՞նչ անեմ, որ մահից հետո արժանանամ երջանիկ կյանքի»: Հիսուսը պատասխանեց նրան. *«Ամենաառաջինը բոլոր պատվիրաններից սա է՝ մեր Տեր Աստվածը Միակն է. սիրի՛ր քո Տեր Աստծուն քո ողջ սրտով, հոգով ու մտքով և քո ողջ զորությամբ: Եվ երկրորդը նման է սրան՝ սիրի՛ր քո մերձավորին, ինչպես ինքդ քեզ: Չկա՛ ավելի մեծ պատվիրան, քան սրանք են»:*

Օրենսգետը հարցրեց. «Բայց ո՞վ է իմ մերձավորը: Ասա ինձ, որ գիտենամ»: Հիսուսը պատասխանեց հետևյալ առակով:

Նա պատմեց. «Մի անգամ Երուսաղեմից Երիքով ուղևորվող մի ճանապարհորդ ընկավ ավազակների ձեռքը, որոնք կողոպտեցին նրան՝ գողացան շորերը՝ թողնելով ընկած ճանապարհի վրա՝ կիսամեռ ու վիրավոր: Եվ երբ խեղճն ընկած էր ճանապարհին, այդտեղով պատահաբար անցավ մի քահանա, որը, սակայն, տեսնելով՝ ուշադրություն չդարձրեց նրա վրա և կողքով անցնելով՝ գնաց ճանապարհի մյուս եզրով: Մեկ ուրիշը՝ մի ղևտացի, եկավ նույն ճանապարհով, նա էլ տեսավ, սակայն լոկ մի պահ հայացք գցելով նրա վրա՝ նույնպես անցավ գնաց: Բայց երբ ոմն սամարացի, որ անցնում էր այդ ճանապարհով, հենց որ տեսավ, լցվեց նրա հանդեպ խղճահարությամբ և մշակեց նրա վերքերը ձեթով ու գինով, և նստեցնելով իր գրաստին՝ հասցրեց նրան մի պանդոկ, իսկ առավոտյան, գրպանից հանելով իր երկու պղնձադրամները, տվեց պանդոկապանին՝ ասելով. «Հոգատարորեն խնամի՛ր նրան, և ինչքան էլ որ ծախսես իմ տվածից ավելին, վերադարձիս քեզ կվճարեմ»»: «Արդ, ի՞նչ ես կարծում», — ասաց Մեր Փրկիչն օրենս-

գետին, «այս երեքից ո՞ր մեկն է համարվելու ավազակների ձեռքն ընկածի մերձավորը»: օրենսգետը պատասխանեց,.«Այն մարդը, որը կարեկցանք ցուցաբերեց նրա նկատմամբ»: «Ճշմարիտ է»,— համաձայնեց Մեր Փրկիչը: «Դու՛ էլ գնա ու վարվի՛ր նույն կերպ: Գթասիրտ ու կարեկի՛ց եղիր բոլոր մարդկանց, զանզի բոլոր մարդիկ քո մերձավորներն ու եղբայրներն են»:

Եվ Նա պատմեց նրանց մի առակ ևս, որը մեզ ցույց է տալիս, որ երբեք պետք չէ հպարտանալ կամ մեծամտանալ Աստծո առաջ՝ մեզ շատ լավը կարծելով, այլ միշտ պետք է լինել համեստ ու խոնարհամիտ: Նա ասաց. «Երբ հրավիրված լինեք հանդիսության կամ հարսանիքի, մի՛ նստեք ամենալավ տեղը, որ չլինի թե ժամանի առավել պատվարժան մեկը և պահանջի այդ նստատեղին: Այլ սեղանի մոտ զբաղեցրեք վերջին աթոռը, և ձեզ կառաջարկեն առաջանալ՝ ավելի լավ տեղ նստելու, եթե դուք արժանի եք դրան: Քանզի ով բարձրացնում է իր անձը, նա կիջնի, կցածրանա, իսկ ով որ խոնարհեցնում է, կբարձրանա»:

Հետո Տերը պատմեց նաև հետևյալ առակը. «Մի մարդ կար, ով մեծ խնջույքի պատրաստություն էր տեսել և շատերին հրավիրել, ուստի, երբ ամեն ինչ պատրաստ էր, ուղարկեց իր ծառային՝ հրավիրյալներին հայտարարելու, որ նրանց սպասում են: Վերջիններս, ներողություն խնդրելով, հրաժարվեցին տարբեր պատճառաբանություններով: Մեկն ասաց, որ գնել է հողատարածք և պետք է գնա այն զննելու: Մյուսը կմկմաց, որ ինքն արդեն գնել է հինգ լծկան եզ և գնալու է դրանց փորձարկելու: Երրորդը հայտարարեց, որ նոր է ամուսնացել և չի կարող ներկայանալ խնջույքին: Երբ Տանուտերն իմացավ այս մասին, շատ զայրացավ, և ծառային հրամայեց նրանց փոխարեն փողոցներից, հարուստ տները ցանկապատող թփերից ու մեծ ճանապարհներից կանչել՝ խնջույքին հրավիրել աղքատներին, կաղերին, կույրերին և խեղանդամներին»:

Այս առակը պատմելով նրանց՝ Մեր Փրկիչը ցանկացավ հասկացնել, որ նրանք, ովքեր այնքա՛ն տարված են սեփական շահով և

ընկած են հաճույքների հետևից, որ գերադասում են դրանք Աստծո հետ հաղորդակցվելուց կամ բարի գործերից, պակաս շնորհի կարժանանան Տիրոջից, քան տկարներն ու դժբախտները:

Երբ Մեր Փրկիչը Երիքով քաղաքում էր, տեսավ մի մարդու՝ Զաքեոս անունով, ով ամբոխի պատճառով բարձրացել էր ծառը՝ այնտեղից Հիսուսին ավելի լավ տեսնելու համար: Զաքեոսին համարում էին գռեհիկ և մեղսակիր անձնավորություն, սակայն նրա մոտով անցնելիս Հիսուս Քրիստոսն ասաց, որ օրվա ընթացքում կայցելի նրա տուն՝ միասին ճաշելու համար: Այնտեղ ներկա մեծամիտ փարիսեցիներն ու դպիրները, լսելով այս, իրար մեջ քրթմնջացին, հետո հպարտագույնս խոսեցին. «Նա ուտում և խմում է մեղավորների հետ»: Ի պատասխան՝ Հիսուսը նրանց պատմեց հետևյալ՝ «ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ՄԱՍԻՆ» հայտնի առակը:

«Ժամանակին կար մի մարդ, — Նա սկսեց պատմել,— ով ուներ երկու որդի, մի օր նրանցից կրտսերն ասաց. «Հայր, տու՛ր ինձ իմ հասանելիք բաժինը քո ունեցվածքից և թու՛յլ տուր, որ այն տնօրինեմ, ինչպես կամենամ»: Հայրը կատարեց որդու խնդրանքը, և նա, վերցնելով փողերը, ճանապարհ ընկավ հեռավոր մի երկիր: Այնտեղ ապրելով սանձարձակ կյանքով՝ նա շուտով վատնում է իր ունեցածը: Եվ երբ նա մսխել էր իր ողջ ունեցածը, երկրում այդ հասան համընդհանուր մեծ աղետի՝ նեղության և սովի ծանր ժամանակներ, երբ հաց չկար, իսկ ցորենը, խոտն ու հողում աճող ամենայն բուսականություն չորացան ու փչացան: Անառակ որդին այնպիսի դաժան չքավորության և սովահարության էր մատնված, որ ստիպված էր վարձվել որպես խոզարած ծառա դաշտերում: Եվ նա ուրախ կլիներ ուտել թեկուզ այն անսնունդ, կոպիտ խոզակաղինները, որոնցով խոզերն էին սնվում, սակայն նրա տերն անգամ դրանք էր զլանում տալ նրան: Եվ այսպես վշտահար և տաժանակոծ՝ նա մտորեց. «Հորս ծառաներից քանի՜–քանիսը բավականաչափ... դեռ ավելին՝ պահեստավորած հաց ու ցորեն ունեն, մինչդեռ ես մեռնում եմ սովից: Վեր կենամ, գնամ հորս մոտ և ասեմ նրան՝ Հայր, մեղանչել եմ Երկնքի և Քո

առաջ, այլևս արժանի չեմ կոչվելու Քո Զավակը... Ընդունի՛ր ինձ որպես ծառա»:

Ծանր սրտով, հույժ ցավագնոտ և տխրաթախիծ՝ նա բռնեց տունդարձի հետադարձ ճամփան՝ դեպի հայրենի տուն: Դեռ հեռվից հայրը նկատեց և ճանաչեց նրան և վազեց դեպի նա՝ ուրախությունից արտասվելով... և նրա վզովն ընկավ՝ փարելով նրան համբույրներով: Այդժամ նա հրամայեց իր ծառաներին հանդերձավորել իր խեղճ, զղջացյալ որդուն լավագույն պատմուճանով և մեծ խնջույք կազմակերպել՝ նրա վերադարձը տոնելու համար: Հրամանն ի կատար ածվեց, և նրանք սկսեցին քեֆ–ուրախությունը:

Սակայն ավագ որդին, ով դաշտում էր եղել և ոչինչ չգիտեր եղբոր վերադարձի մասին, տունդարձին լսելով երաժշտության հնչյունները և պարողների դոփյունը՝ կանչեց ծառաներից մեկին և հարցրեց նրան, թե ինչ է այդ ամենը նշանակում: Ծառան զեկուցեց, որ նրա եղբայրն է տուն վերադարձել, և որ նրանց հայրը շատ երջանիկ է նրա վերադարձին: Այս խոսքին ավագ եղբայրը զայրացավ և չուզեց տուն մտնել, և հայրն, այս մասին լսելով, դուրս եկավ նրան համոզելու՝ ներս տանելու:

«Հայր,— ասաց ավագ եղբայրը,— դու ինձ հետ արդարացի չես վարվում՝ ցուցաբերելով այսպիսի մեծ խանդավառություն կրտսեր եղբորս վերադարձին: Քանզի ամբողջ այս երկար տարիների ընթացքում քեզ հետ եմ մնացել անբաժան և հավատարիմ, մինչդեռ դու մինչ օրս ոչ մի խնջույք էլ չես արել ինձ համար: Իսկ երբ վերադառնում է իմ կրտսեր եղբայրը, որ, լինելով զեխ, շվայտ և անհնազանդ, վատնեց իր փողերը հազար ու մի վատ ճանապարհով, դու համակվում ես հիացմունքով, իսկ ողջ տունը՝ ուրախությամբ»: Ի պատասխան հայրն ասաց. «Որդի՛ս, դու միշտ էլ եղել ես ինձ հետ, և այն ամենն, ինչ որ ունեմ, քոնն է: Մենք կարծում էինք, որ քո եղբայրը մեռած է, այնինչ նա ողջ է: Նա կորած էր և գտնվեց, ուստի բնական է և արդարացի, որ ուրախանանք նրա պապենական տուն անսպասելի վերադարձով»»:

Այս առակով Մեր Փրկիչը մտադիր էր ուսուցանել, որ նրանք, ովքեր սխալ են գործել և մոռացել են Աստծուն, միշտ ցանկալի են Նրան և ողջունելի, եթե միայն դարձի գան առ Աստված՝ ցավելով և զղջալով մեղանչածի համար:

Արդ, փարիսեցիները, ունկնդրելով այս պատմությունները Մեր Փրկչից, դաս չէին քաղում դրանցից, որովհետև լսում էին անտարբեր ու քամահրանքով, քանզի լինելով մեծահարուստ և միաժամանակ ընչաքաղց՝ իրենց մասին մեծ համարում ունեին՝ իբրև թե կարծեցյալ առավելությամբ մի գլուխ բարձր մնացյալ ողջ մարդկությունից: Նրանց սթափեցնելու համար՝ որպես զգուշացում և կշտամբանք, Քրիստոսը պատմում է սույն՝ ՄԵԾԱՏՄՆ ԵՎ ՂԱԶԱՐՈՍԻ առակը:

Կար մի մարդ, ով հագնվում էր թանկարժեք վուշե զգեստներ՝ ծիրանի և գեղանի, և իր օրերն անցկացնում շքեղության, առատության և հարստության մեջ: Կար նաև Ղազարոս անունով մի մուրացկան, ով պառկած էր նրա դռների մոտ՝ վերքերով պատված, և երազում էր դույզն–ինչ սնվել այն փշրանքներով, որոնք ընկնում էին մեծահարուստի սեղանից: Անգամ կարեկից, բախտակից շներն էին գալիս լիզում նրա վերքերը:

Ժամանակը եկավ, և մուրացկանը մահացավ, և հրեշտակները նրան տարան Երկինք, այնտեղ էր նաև Աբրահամը՝ վաղուց երկրում ապրած շատ բարի մի մարդ, որ ընդունեց նրան գրկաբաց: Հարուստն էլ մահացավ ու թաղվեց: Եվ այնտեղ՝ դժոխային տանջանքներում, նա բարձրացրեց աչքերն ու հեռվում տեսավ Աբրահամին և Ղազարոսին նրա գրկում: Եվ գոռալով նա կանչեց. «Հայր Աբրահամ, գթա՛ ինձ, ուղարկի՛ր Ղազարոսին, որպեսզի նա, ջրում թաթախելով իր մատի ծայրը, զովացնի լեզուս, քանզի տանջվում, պապակվում եմ այս կրակի մեջ»: Բայց Աբրահամը պատասխանեց. «Որդյա՛կ, հիշի՛ր, որ երկրում քո կյանքն ապրեցիր՝ բարիքներ ձեռք բերելով, իսկ Ղազարոսը գտավ լոկ տառապանք: Հիմա էլ նա է մխիթարվում բարով, իսկ դու՝ տանջվում»:

Եվ այդ նույն փարիսեցիներին նրանց գոռոզամտության համար Քրիստոսն, ի շարս այլ առակների, բերեց ևս մեկ օրինակ երկու մարդու մասին, որոնք գնացել էին Տաճար՝ աղոթելու, նրանցից մեկը փարիսեցի էր, իսկ մյուսը՝ հարկահավաք: Փարիսեցին աղոթում էր. «Աստվա՛ծ իմ, շնորհակալ եմ Քեզանից, որ ես անարդար չեմ, ինչպես ուրիշներն են, ոչ էլ անբարո, ինչպես այս հարկահավաքը»: Իսկ հարկահավաքը, հեռու կանգնած, չէր էլ համարձակվում բարձրացնել իր աչքերը դեպի երկինք, այլ միայն ասում էր՝ կուրծքը ծեծելով. «Աստվա՛ծ, ողորմի՛ր ինձ՝ մեղավորիս»: «Եվ Աստված ավելի շուտ նրա հանդեպ ողորմած կլինի, քան թե մյուսի, և առավել գոհունակությամբ կընդունի նրա աղոթքը, քանզի նա աղոթում էր խոնարհ և հեզ սրտով»,— եզրակացրեց Մեր Փրկիչը:

Փարիսեցիներն այնքա՛ն էին կատաղել՝ խրատվելով Տիրոջ այս դասերով, որ վարձեցին որոշ լրտեսների ու նրանց պատվիրեցին, որ գնան և նենգադավ հարցերով պատրեն Մեր Փրկչին՝ ստիպելով նրան որևէ բան ասել օրենքին հակառակ: Արդ, Կեսարը, ով այդ երկրի կայսրն էր, տնօրինում էր գանձվող հարկն ու տուրքը և ժողովրդից պահանջում, որ այն կանոնավորապես իրեն վճարեն, շատ խանդոտ էր այս հարցում և դաժանորեն պատժում էր յուրաքանչյուրին, ով հանդգներ վիճարկել նրա այդ իրավունքը: Եվ վարձու լրտեսները մտածեցին, որ իրենց, թերևս, կհաջողվի դրդել Մեր Փրկչին ասելու, որ դա անարդար և հարկադիր հարկատվություն է, որպեսզի այդպիսով Նա հարուցի կայսեր զայրույթն Իր նկատմամբ: Ուստի և շատ համեստ ձևանալով՝ եկան Նրա մոտ և ասացին. «Ուսուցի՛չ, Դու Աստծո Խոսքն ուղիղ և ճիշտ ես ուսուցանում, և մարդկանց գնահատում ու հարգում ես անաչառորեն՝ հաշվի չառնելով նրանց հարստությունը կամ բարձր դիրքը: Ասա՛, խնդրեմ, օրինակա՞ն է արդյոք հօգուտ Կեսարի մեզանից հարկվող տուրքը»:

Քրիստոսը, գիտենալով նրանց խորհուրդներն, ասաց. «Ինչու՞ եք հարցնում: Ցու՛յց տվեք ինձ մի մետաղադրամ»: Նրանք

տվեցին այդ: «Ու՞մ պատկերը և ու՞մ անունն են դրամի վրա»,— հարցրեց նրանց Տերը: Նրանք պատասխանեցին. «Կեսարինը»: «Ուրեմն, ինչը որ Կեսարինն է, տվե՛ք Կեսարին»,— ասաց Տերը:

Եվ նրանք հեռացան Նրանից՝ հույժ կատաղած և հիասթափված, որ չկարողացան որոգայթել Տիրոջը: Սակայն Մեր Փրկիչը, գիտենալով նրանց սրտի չար խորհուրդները, գիտեր նաև, որ թիկունքում Իր դեմ դավեր էին հյուսում ուրիշները, և որ շուտով Ինքը կդատապարտվի մահվան:

Մի առիթով, երբ ուսուցանում էր մարդկանց այս բաները, Հիսուսը նստեց հասարակաց գանձանակի մոտ. սա մի արկղ էր, որի մեջ, սովորության համաձայն, փողոցով անցուդարձ անողները փող էին գցում աղքատների համար: Եվ մինչ Նա նստած էր այդտեղ, բազմաթիվ հարուստներ անցան և շատ փող նվիրաբերեցին: Վերջում, երբ Հիսուսը վեր կացավ այդտեղից գնալու համար, մոտեցավ մի աղքատ այրի, ով արկղի մեջ գցեց երկու լումա՝ յուրաքանչյուրն ընդամենը քառորդ պղնձադրամի կես արժեքով, և լռելյայն հեռացավ: Տեսնելով, թե ինչպես նա վարվեց, Տերն Իր մոտ կանչեց աշակերտներին և նրանց ասաց, որ իրականում այդ աղքատ այրին օրվա ընթացքում բոլոր դրամ նվիրաբերողներից առավել գթասիրտ է, քանզի մյուսները հարուստ էին, իսկ նրանց տվածը՝ ունեցածի համեմատ համարյա ոչինչ, այնինչ նա, շատ աղքատ լինելով, տվեց այն երկու լուման, որով գնելու էր իր հանապազօրյա հացը: Եվ երբ ինքներս մեզ գթասիրտ երևակայելով՝ այդպիսին համարենք, թող հիշենք ու երբեք չմոռանանք աղքատ այրու բարեգործությունը:

«Շուշանի դատը», 2016 թ., կտավ, յուղ., 180 x 140 սմ

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Բեթանիայում ապրում էր մի մարդ՝ Ղազարոս անունով, նա այն Մարիամի եղբայրն էր, որ հետագայում Քրիստոսի ոտքերը թանկարժեք յուղով օծելու և այնուհետ սրբելու էր իր մազերով: Ահա Մարիամն ու նրա քույրը՝ Մարթան, մեծ վշտով լուր ուղարկեցին, թե՝ «Տեր, Ղազարոսը, ում Դու սիրում ես, հիվանդ է և ուր որ է կմեռնի»:

Հիսուսը չգնաց նրանց մոտ: Լուրը ստանալուց երկու օր անց Նա ասաց Իր աշակերտներին. «Ղազարոսը մահացավ: Արե՛ք գնանք Բեթանիա»: Երբ նրանք հասան այդտեղ (որը Երուսաղեմին շատ մոտ մի վայր էր), Ղազարոսին արդեն մեռած գտան, ինչպես և ասել էր Հիսուսը, նա մահացել և թաղվել էր չորս օր առաջ:

Երբ Մարթան լսեց, որ Հիսուսը գալիս է, վեր կացավ և թողնելով մարդկանց, որոնք եկել էին կարեկցելու և նրա հետ սգալու վաղամեռիկ եղբոր մահը, և իր լացող քրոջը՝ Մարիամին, տանը, վազեց Նրան դիմավորելու: Երբ Մարթան տեսավ Նրան, արցունքների միջից փղձկալով ասաց. «Օ՜հ Տեր, եթե Դու այստեղ լինեիր, եղբայրս չէր մեռնի»: «Քո եղբայրը հարություն կառնի»,— պատասխանեց Մեր Փրկիչը: «Գիտեմ և հավատում եմ, Տե՛ր, որ նա հարություն կառնի Վերջին Դատաստանի Օրը»,— ասաց Մարթան:

Հիսուսն ասաց նրան. «Ես եմ Հարությունը և Կյանքը: Դու սրան հավատու՞մ ես»: Նա պատասխանեց՝ Այո՛, Տե՛ր, և հետ վազելով իր քրոջ՝ Մարիամի մոտ, նրան հայտնեց, որ Քրիստոսը եկել է: Մարիամը, լսելով այս, դուրս վազեց, նրա հետևից էլ՝ բոլոր նրանք, ովքեր տանը լացուկոծում էին նրա հետ, և հասնելով

Տիրոջը՝ բոլորն ընկան Նրա ոտքերի մոտ՝ լալահառաչ, գետնին ծնրադրելով: Հիսուսն այնքա՛ն լեցուն էր նրանց վշտի հանդեպ կարեկցությամբ և վշտակցությամբ, որ նույնպես արտասվեց և ասաց. «Որտե՞ղ եք նրան դրել»: Նրան պատասխանեցին. «Արի՛ և տե՛ս, Տե՛ր»:

Նրան թաղել էին քարայրում, քարակոփ գերեզմանն էլ ահագին քարով փակել: Երբ բոլորը մոտեցան անձավաշիրմին, Հիսուսը պահանջեց, որ քարը կողքի գլորեն, այդպես էլ արեցին: Այդժամ, աչքերը բարձրացնելով և գոհանալով Աստծուց, Նա հնչեղ և սարսռազդու ձայնով գոչեց. «Ղազարո՛ս, դու՛րս արի»: Եվ մեռած Ղազարոսը վերակենդանացավ, դուրս եկավ և հարելով մարդկային խմբին՝ քույրերի հետ վերադարձավ տուն: Այս տեսարանը՝ այդքա՛ն սարսռազդու և հուզիչ, խորապես ազդեց ներկաների վրա, որոնցից շատերը հավատացին, որ Քրիստոսն իսկապես Աստծո Որդին է՝ եկած մարդկությանը ուսուցանելու և փրկելու համար: Բայց ոմանք էլ վազեցին տեսածը փարիսեցիներին պատմելու, և այդ օրվանից փարիսեցիները հաստատակամ և միահամուռ որոշեցին, որ Հիսուսը պետք է սպանվի, որպեսզի է՛լ ավելի շատ մարդիկ Նրան չհավատան: Այդ նպատակով հավաքվելով Տաճարում՝ նրանք եկան համաձայնության, որ եթե Նա օրեցօր մոտեցող Զատկի տոնից առաջ Երուսաղեմ գնա, իսկույն ձերբակալեն:

Երբ Հիսուսը Ղազարոսին հարություն տվեց մեռելներից՝ Պասեքի տոնից վեց օր առաջ էր (Պասեքը հրեաների Զատիկն է, որ տոնում են ի հիշատակ ստրկական գերությունից իրենց ազատագրման – ծանոթ. թարգմանչի): Եվ օրվա վերջում, երբ նրանք բոլորը Ղազարոսի հետ միասին նստել էին ընթրիքի, Մարիամը, տեղից բարձրանալով և վերցնելով անուշաբույր յուղով լի սրվակը (որ շատ գովական և թանկարժեք նարդոսի ամոքայուղ էր), դրանով օծեց Հիսուս Քրիստոսի ոտքերը, այնուհետև սրբեց իր մազերով, և ողջ տունը լցվեց նարդյան յուղի զմայլելի անուշահոտությամբ: Աշակերտներից մեկը՝ Հուդա Իսկարիովտացին,

ձևանալով, թե իբր զայրացած է այս արարքով, ասաց, որ նարդոսայուղը կարելի էր վաճառել երեք հարյուր պղնձադրամով, իսկ գումարը բաշխել աղքատներին: Բայց նա իրականում այդպես ասաց լոկ այն պատճառով, որ իր մոտ էր գանձանակը, և ինքն էլ գող էր (որի մասին դեռևս չգիտեին) և ցանկանում էր հնարավորինս շատ փող գրպանել այդտեղից: Նա արդեն հղացել էր Քրիստոսին մատնելու միտքը՝ քահանայապետերին հանձնելու համար:

Հրեական Զատկի տոնն արդեն շատ մոտ էր, և Հիսուս Քրիստոսն իր աշակերտների հետ շարժվեց դեպի Երուսաղեմ: Երբ նրանք ընդհուպ մոտեցել էին քաղաքին, Նա ցույց տվեց մի գյուղ և աշակերտներից երկուսին ասաց, որ գնան և այնտեղ գտնելով ծառին կապած մի ավանակ քուռակի հետ՝ բերեն Իր մոտ: Գտնելով կենդանիներին ճիշտ և ճիշտ Հիսուսի նկարագրածի համաձայն՝ աշակերտները նրանց բերեցին գյուղից, և Հիսուսը, ավանակի վրա նստած, մտավ Երուսաղեմ: Եվ երբ Նա մտնում էր քաղաք, Նրա շուրջ հավաքվեց մարդկային ահռելի բազմություն, որոնք Նրա ճանապարհին՝ ոտքերի տակ էին փռում իրենց թիկնոցներն ու ծառերից պոկած կանաչ ճյուղերը և բղավում, բացականչում էին. «Օվսաննա Դավթի Որդուն (Դավիթը մեծ թագավոր էր եղել այդտեղ), Նա գալիս է Տիրոջ անվամբ: Սա Հիսուսն է՝ Նազարեթի Մարգարեն»: Եվ երբ Հիսուսը մտավ Տաճար և այնտեղ շուռ տվեց դրամափոխների սեղանները, որոնք աղավնիներ վաճառողների հետ անօրինաբար նստել էին այդտեղ, ասելով՝ «Իմ Հոր տունը աղոթքի տուն է, իսկ դուք այն վերածել եք ավազակարոջի», քահանայապետերը, դպիրներն ու փարիսեցիները Նրա հանդեպ լցվեցին վախով և ատելությամբ, քանզի մարդիկ, երեխաներն աղաղակում էին Տաճարում՝ «Սա Հիսուսն է, Նազարեթի Մարգարեն», և չէին լռում, և կույրերն ու կաղերը խուռներամ՝ անդադար գալիս էին այդտեղ ու բժշկվում Նրա ձեռքով: Եվ Հիսուսը շարունակ բժշկում էր հիվանդներին և բարին արարում, հետո գնաց Նա Բեթանիա՝ ժամանակավոր այնտեղ բնակվելու,

մի վայր, որն ընդհուպ հարում էր Երուսաղեմին, բայց քաղաքի պարիսպներից դուրս էր:

Այդտեղ մի գիշեր, երբ աշակերտները Հիսուսի հետ հավաքվել էին ընթրիքի սեղանի շուրջը, Նա վեր կացավ և վերցնելով սրբիչ ու ջրով լի թաս՝ լվաց աշակերտների ոտքերը: Սիմոն Պետրոսը՝ աշակերտներից մեկը, փորձեց կանխել՝ հետ պահել Նրան իր ոտքերը լվանալուց, սակայն Մեր Փրկիչն ասաց նրան, որ Ինքն այս բանն արեց նրանց ի պատգամ, որպեսզի հիշելով այս՝ նրանք կարողանան միշտ բարի ու սրտակից լինել մեկմեկու նկատմամբ՝ չիմանալով, թե ինչ է գոռոզությունը կամ չարակամությունը:

Հետո Նա տխրեց և վշտացավ, և նայելով շուրջը՝ աշակերտներին, ասաց. «Այստեղ կա մեկը, ով ինձ մատնելու է»: Նրանք սկսեցին բացականչել իրար հետևից՝ մեկմեկու ընդհատելով. «Դա ե՞ս եմ, Տեր: Ե՞ս եմ: Ե՞ս»: Ի պատասխան՝ Նա միայն ասաց. «Նա տասներկուսիցդ մեկն է, ով Ինձ հետ թաթախում է պատառը պնակի մեջ»: Այդ ժամանակ աշակերտներից մեկը, ում Հիսուսը սիրում էր, հակված Նրա կրծքին՝ լսում էր Նրա խոսքերը, նրան էլ Սիմոն Պետրոսը ձեռքով նշան արեց, որպեսզի հարցնի այդ դավաճանի անունը: Հիսուսը պատասխանեց. «Դա նա է, ում կտամ Ես պատառը պնակի մեջ թաթախելուց հետո»: Եվ թաթախելուց հետո Նա տվեց այն Հուդա Իսկարիովտացուն՝ ասելով. «Ինչ որ անելու ես, արա՛գ արա»: Այս խոսքն աշակերտները չհասկացան, սակայն Հուդայի համար դա նշանակում էր, որ Քրիստոսը կարդացել էր իր չար մտքերը:

Եվ Հուդան, պատառը վերցնելով, իսկույն դուրս եկավ: Գիշեր էր, և նա գնաց ուղիղ քահանայապետերի մոտ և ասաց. «Ի՞նչ կտաք ինձ, եթե ես Նրան հանձնեմ ձեզ»: Նրանք համաձայնեցին մատնիչին տալ երեսուն արծաթադրամ, ու հանուն սրա նա հանձն առավ շուտով մատնել՝ հանձնել իր Տեր և Ուսուցիչ Հիսուս Քրիստոսին նրանց ձեռքը:

«Եղիցի կամք Քո», 2013 թ., կտավ, յուղ., 155 x 127 սմ

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Զատկի տոնի նախօրեին Հիսուսն ասաց աշակերտներից երկուսին՝ Պետրոսին և Հովհաննեսին. «Գնացեք Երուսաղեմ, քաղաքում դուք կհանդիպեք ջրով լի կուժը կրող մեկին: Հետևեք նրան մինչև տուն և ասեք. «Տերը հարցնում է, թե որտեղ է այն վերնասենյակը, որտեղ Նա կկարողանա նշել Զատիկը՝ ուտել իր աշակերտների հետ»: Եվ նա ձեզ ցույց կտա ընդարձակ կահավորված սենյակ վերնահարկում, այդտեղ էլ նախապատրաստեցեք ընթրիքը»: Երուսաղեմում երկու աշակերտների հետ պատահեց այն ամենն, ինչպես Հիսուսն էր ասել, նրանք և՛ հանդիպեցին ջրի կուժը տանող մարդուն, և՛ հետևեցին նրան մինչև տուն, որտեղ ուղեկցելով վերնասենյակ՝ պատրաստեցին ընթրիքը, և Հիսուսն ու մնացյալ տասն աշակերտները եկան ընդունված ժամին, ու բոլորը միասին նստեցին համատեղ ընթրիքի:

Այսուհետ՝ բոլոր դարերում, այն կոչվելու է Վերջին Ընթրիք, քանզի վերջին անգամ էր, որ Մեր Փրկիչը կերավ և խմեց Իր աշակերտների հետ:

Եվ Նա, վերցնելով հացը սեղանից, օրհնեց այն, բեկանեց ու տվեց նրանց, նույնպես վերցրեց գինով գավաթն ու օրհնեց այն, խմեց և տվեց նրանց՝ ասելով. «Այս արեք ի հիշատակ Ինձ»: Երբ նրանք վերջացրել էին ընթրիքը և երգել էին փառաբանության աղոթքը, գնացին դեպի Ձիթենյաց լեռը:

Այնտեղ Հիսուսը խոսեց նրանց հետ այն մասին, որ այդ գիշեր Նա ձերբակալվելու է, և որ նրանք բոլորը կլքեն Նրան՝ թողնելով մենակ, մտածելով միայն սեփական կաշին փրկելու մասին: Պետրոսը եռանդուն առարկելով ասաց, որ երբեք չի լքի, ով–ով՝ միայն ո՛չ ինքը: Բայց Մեր Փրկիչն ասաց. «Մինչ աքաղա-

ղի կանչելը դու կուրանաս Ինձ երեք անգամ»: Սակայն Պետրոսը պնդում էր. «Ո՛չ Տեր: Թեկուզ և մեռնելու լինեմ Քեզ հետ, երբեք չեմ ուրանա Քեզ»: Նույնն էին ասում նաև մյուս աշակերտները:

Այնուհետև Հիսուսը նրանց տարավ Գեթսեման կոչված այգին այն ճանապարհով, որն անցնում էր Կեդրոն կոչված առվակի վրայով, այնտեղ Նա աշակերտներից երեքի հետ հեռացավ այգու մեկուսի հատվածը: Այնտեղ Նա դիմեց աշակերտներին՝ «Սպասեք այստեղ և արթուն կացեք», ապա թողեց նրանց, ինչպես և թողել էր մյուսներին, և հեռացավ միայնակ աղոթելու, սակայն նրանք, հոգնած լինելով, քնով ընկան:

Այգում Քրիստոսն ահավոր ապրումների մեջ արտահայտում էր ահագնացող վիշտն ու հոգու տվայտանքներն Իր աղոթքներում՝ Երուսաղեմի մարդկանց սև չարամտության պատճառով, ովքեր պատրաստվում էին Նրան սպանելու, և հեղում էր արցունքն Աստծո առաջ, և սաստիկ ու խոր տառապանքի մեջ էր:

Երբ աղոթքներն արտասանված էին, իսկ Նա՝ քաջալերված, վերադարձավ աշակերտների մոտ և ասաց. «Վե՛ր կացեք: Գնա՛նք այստեղից: Շա՛տ մոտ է նա, ով մատնելու է Ինձ»:

Համարյա այդ նույն պահին, երբ Մեր Փրկիչն ասում էր այս խոսքերը, Հուդան եկավ այդտեղ (իսկ նա քաջ գիտեր այդ այգին, քանի որ Մեր Փրկիչը հաճախ էր զբոսնում այնտեղ Իր աշակերտների հետ) քաղաքային և զինվորական պաշտոնյաների մի զինավառ խմբի ուղեկցությամբ, որոնք ուղարկել էին քահանայապետերն ու փարիսեցիները: Նրանք լապտերներով և ջահերով էին, քանի որ մութն ընկել էր: Զինված էին նաև թրերով և նիզակներով, ո՞վ գիտի, միգուցե ժողովուրդը ոտքի կանգնի ու պաշտպանի Հիսուս Քրիստոսին, այս մտավախությամբ նրանք չհանդգնեցին բռնել Նրան օրը ցերեկով, երբ նստած ուսուցանում էր ժողովրդին:

Քանի որ խմբի չարագլուխը երբեք չէր տեսել Հիսուս Քրիստոսին ու չէր էլ տարբերում առաքյալներից՝ Հուդան նախապես զգուշացրեց. «Այն մարդն, ում ես կհամբուրեմ, Նա է»: Մինչ նա

մտորում էր չարածին համբույրով պագանելու մասին, Հիսուսն ասաց զինվորներին. «Ու՞մ եք դուք փնտրում»: «Հիսուսին՝ Նազարեթից»,— եղավ նրանց պատասխանը: «Այդ դեպքում,— ասաց Մեր Փրկիչը, — դա Ես եմ: Թողեք իմ աշակերտներին ազատ գնալու այստեղից: Ես եմ»: Սա հաստատեց Հուդան՝ բացականչելով՝ «Ողջո՛ւյն, Ուսուցիչ», և համբուրեց Նրան: Հիսուսը շուտափույթ ասաց. «Հուդա, համբույրով ես դու Ինձ մատնում»:

Այդ պահին զինյալները վրա հասան Նրան բռնելու: Ոչ ոք չփորձեց Նրան պաշտպանել, բացի Պետրոսից, ով հանեց իր սուրն ու կտրեց քահանայապետի ծառայի աջ ականջը, սա մեկն էր չարագործներից, որի անունն էր Մաղքոս: Սակայն Հիսուսը Պետրոսին ստիպեց սուրը պատյանը դնել ու հանձնվեց: Այդժամ բոլոր աշակերտները ճողոպրեցին՝ թողնելով Նրան մենակ ու անօգնական, ոչ ոք չմնաց, ոչ ոք՝ Նրա կողքին լինելու օրհասական պահին:

«Ոտնլվա», 2018 թ., կտավ, յուղ., 160 x 180 սմ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Կարճ ժամանակ անց Պետրոսը սրտապնդվելով մեկ այլ աշակերտի հետ ծածուկ հետևեց պահակախմբին մինչև քահանայապետ Կայափայի տունը, որտեղ տարվել էր Հիսուսն, ու որտեղ էլ ժողովվել էին դպիրներն ու այլք՝ Նրան հարցաքննելու: Պետրոսը մնաց դռան մոտ կանգնած, բայց մյուս աշակերտն, ով ծանոթ էր քահանայապետին, ներս մտավ, և որոշ ժամանակ անց վերադառնալով՝ խնդրեց դռնապահ կնոջը, որպեսզի Պետրոսին ևս ներս թողնի: Կինը, նայելով Պետրոսին, հարցրեց. «Դու Նրա աշակերտներից մեկը չե՞ս»: Պետրոսը պատասխանեց. «Ո՛չ, աշակերտներից չեմ»: Կինը ներս թողեց նրան: Բակում նա կանգնեց խարույկի մոտ, որպեսզի տաքանա, քանզի շատ ցուրտ էր՝ շրջապատված ծառայողներով և ավագ զինվորականներով, որոնք նույնպես հավաքվել էին կրակի շուրջը: Այդ մարդկանցից մեկը նրան նույն այն հարցը տվեց, որ տվել էր կինը. «Դու աշակերտներից չե՞ս»: Ու նորից նա ուրացավ՝ ասելով, «Ո՛չ, նրանցից չեմ»: Մեկ ուրիշն էլ, ով այն մարդու ազգականն էր, որի ականջը կտրեց Պետրոսն իր սրով, ասաց. «Արդյոք քե՞զ չեմ տեսել այգում՝ Նրա հետ»: Պետրոսը երդմամբ ժխտեց այդ նորից ու ասաց. «Ես չգիտեմ այդ Մարդուն»: Հենց այդ պահին աքաղաղը կանչեց, և Հիսուսը շրջվելով երկար նայեց նրան: Այդտեղ Պետրոսը հիշեց, թե ինչ էր Նա ասել՝ որ մինչև աքաղաղի կանչելը երիցս ուրանալու է Հիսուսին, և նա դուրս եկավ ու դառնորեն արտասվեց:

Ի շարս Հիսուսին տրվող այլևայլ հարցերի քահանայապետը հարցրեց Նրան, թե ինչ է ուսուցանել մարդկանց: Նա պատասխանեց, որ նրանց ուսուցանել է բացահայտ՝ օրը ցերեկով, լայնարձակ փողոցներում, և հարկ է, որ քահանաները մարդկանց

հարցնեն, թե ինչ են սովորել Իրենից: Ավագ զորականներից մեկը ձեռքով հարվածեց Հիսուսին այս պատասխանի համար, և երկու կեղծ վկաներ մտնելով ասացին, որ իրենք լսել էին, թե ինչպես էր Նա ասում, որ կարող է քանդել Աստծո Տաճարը և այն նորից կառուցել երեք օրում: Հիսուսը համարյա չէր պատասխանում, սակայն դպիրներն ու փարիսեցիները համաձայնեցին մեղավոր ճանաչել Նրան աստվածանարգության մեջ՝ ենթակա մահապատժի, ուստի նրանք թքում և ծեծում էին Նրան:

Երբ Հուդա Իսկարիովտացին տեսավ, որ իր Ուսուցիչը հաստատորեն դատապարտված է, և գիտակցեց, թե ինչ է արել, համակվեց իր ողջ էությունն ընդգրկող այնպիսի սարսափով, որ երեսուն արծաթադրամները հետ տվեց քահանայապետերին և ասաց. «Ես անմեղ արյուն եմ դավել: Չեմ կարող դրանք ինձ մոտ պահել»: Այս խոսքերի հետ նա փողը շպրտեց գետնին և անհուսությունից խելահեղ ու մոլեգնած դուրս նետվելով՝ իրեն ծառից կախեց: Թույլ լինելով՝ պարանը կտրվեց նրա մարմնի ծանրությունից, և անշնչացած մարմինն ընկավ գետնին՝ ամբողջովին կապտած ու քայքայված՝ թափված փորոտիքով. զարհուրելի և անտանելի տեսարան: Քահանայապետերը, չիմանալով, թե այլևս ինչ անեն երեսուն արծաթադրամների հետ, դրանցով գերեզմանատեղի գնեցին օտարականների համար, այդ հողակտորն անվանված էր «Կավագործների արտ»: Սակայն մարդիկ հետագայում այն միշտ կոչում էին «Արյան արտ»:

Վերցնելով Հիսուսին քահանայապետերի մոտից՝ Նրան տարան Պոնտացի Պիղատոսի՝ նահանգապետի նստավայրը, որի Դատավարությունների դահլիճում նա դատավճիռներ էր կայացնում արդարությունը հաստատելու համար: Պիղատոսը (ով հրեա չէր) ասաց Նրան. «Հրեաները՝ Քո ժողովուրդը, և ձեր քահանաները Քեզ հանձնել են ինձ: Ի՞նչ ես Դու արել»: Պարզելով, որ Նա ոչ մի վնասակար բան չի արել, Պիղատոսը դուրս եկավ և իր կարծիքը հայտնեց հրեաներին, սակայն նրանք ասացին. «Նա ժողովրդին ուսուցանում էր ոչ թե ճշմարիտ, այլ սխալ բաներ, Նա

վաղուց էր սկսել մարդկանց մոլորեցնել՝ դեռևս Գալիլեայից»: Եվ քանի որ Հերովդեսն էր իրավասու պատժել Գալիլեայում օրենքի դեմ մեղանչողներին, Պիղատոսն ասաց. «Ես վատ բան չեմ գտնում Նրանում: Ներկայացրե՛ք Նրան Հերովդեսին»:

Այդպիսով Նրան տարան հանձնելու Հերովդեսի դատին, այնտեղ, որտեղ նա բազմել էր՝ շրջապատված իր խոժոռ զորականներով և զրահակիր մարդկանցով: Սրանք, ծիծաղելով Հիսուսի վրա, Նրան ծաղրելու համար հագցրին գեղեցիկ պատմուճան և հետ ուղարկեցին Պիղատոսի մոտ: Եվ Պիղատոսը նորից կանչեց քահանաներին ժողովրդի հետ միասին և ասաց. «Ո՛չ ես, ո՛չ էլ Հերովդեսը սխալ բան չենք գտնում այս Մարդու մեջ: Նա մահվան արժանի ոչինչ չի արել»: Բայց նրանք գոռում էին. «Արե՛լ է, արե՛լ է: Այո՛, այո՛: Թող Նրան սպանեն»:

Պիղատոսը տագնապ ապրեց՝ լսելով, թե որքան բարձրաղմուկ են նրանք հանդես գալիս ընդդեմ Հիսուս Քրիստոսի: Նրա կինը ևս ողջ գիշեր իր երազներում տեսել էր նման տեսարաններ, ուստի մարդ ուղարկեց նրա նստավայրը՝ խնդրելով նրան «ոչինչ չանել այդ արդար Մարդուն»: Քանի որ ավանդաբար Զատկի տոնին որևէ բանտարկյալի ազատ էին արձակում՝ այդ սովորույթի համաձայն՝ Պիղատոսը ջանադրաբար փորձեց տարհամոզել մարդկանց՝ պահանջելու Հիսուսի ազատումը: Սակայն նրանք (լինելով հույժ խավարամիտ և ատելավառ, ինչպես նաև ներշնչված քահանաներից) ասացին. «Ո՛չ, ո՛չ, մենք չենք ուզում, որ Նա ազատվի: Արձակե՛ք Բարաբասին, իսկ այս Մարդը թող խաչվի»:

Բարաբասը չարաթույն հանցագործ էր, որ բանտում էր իր չարագործությունների համար, և նրան սպառնում էր մահապատժի վտանգը:

Պիղատոսը հասկանալով, որ մարդկանց տրամադրվածությունն ընդդեմ Հիսուսի անհողդողդ է, հանձնեց Նրան զինվորներին՝ գանակոծվելու, այսինքն՝ ծեծի: Նրանք փշերից պսակ հյուսեցին և դրեցին այն Նրա գլխին, և հագցրին ծիրանի թիկնոց, և թքում էին ու խփում Նրան իրենց ձեռքերով, և հիշելով, թե

ինչպես էր մարդկանց բազմությունը Նրան Դավթի Որդի կոչում Երուսաղեմ մտնելիս, ասում էին. «Ողջո՛ւյն, հրեաների՛ Թագավոր»: Եվ նրանք չարաչար վարվեցին Նրա հետ անգութ արարքներով, սակայն Հիսուսը, տանելով այս ամենը համբերությամբ, միայն մրմնջում էր. «Հա՛յր, ների՛ր նրանց: Չգիտե՞ն, թե ինչ են անում»:

Մեկ անգամ ևս Պիղատոսը Նրան դուրս հանեց մարդկանց առաջ ծիրանի թիկնոցում և փշե պսակով և ասաց. «Ահավասիկ Մարդը»: Նրանք քահանայապետերի ու զորապետերի հետ միասին պոռում էին գազազած. «Խաչի՛ր Նրան, խաչի՛ր Նրան»: «Վերցրե՛ք ու ինքնե՛րդ խաչեք Նրան,— ասաց Պիղատոսը,— Նրանում ես մեղավորություն չեմ գտնում»: Բայց նրանք բղավում էին. «Նա Իրեն կոչել է Աստծո Որդի, ուստի հրեական օրենքի համաձայն՝ ենթակա է մահվան: Նա նաև Իրեն կոչում էր Հրեաների Թագավոր, ինչը դեմ է հռոմեական օրենքին, քանզի մենք բացի Կեսարից, ով Հռոմի կայսրն է, այլ թագավոր չունենք: Եթե դու Նրան ազատես, նշանակում է՝ Կեսարի բարեկամը չես: Խաչի՛ր Նրան, խաչի՛ր Նրան»:

Երբ Պիղատոսը տեսավ, որ, չնայած նրանց հետ բանակցելիս իր ջանք ու ճիգ չխնայելուն, միևնույնն է՝ ուզածին չի հասնելու, պահանջեց, որ ջուր բերեն, և լվանալով իր ձեռքերն ամբոխի առջև՝ ասաց. «Ես անմեղ և անմասն եմ այս արդար Մարդու արյունից»: Հետո նա Հիսուսին հանձնեց նրանց՝ խաչելության, և նրանք վայրի ճիչերով հավաքվեցին Նրա շուրջը, և գազանաբար ծեծելով Նրան (Ով դեռևս աղոթում էր նրանց համար Աստծուն) և հայհոյելով՝ տարան իրենց հետ:

«Հիսուսի երկրորդ գալուստը», 2012 թ., կտավ, յուղ., 175 x 137 սմ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Որպեսզի պատկերացնենք, թե ինչ էր ուզում ամբոխն՝ ասելով «խաչիր Նրան», պատմեմ, որ այդ ժամանակներում, որ հարկավ շատ դաժան էին (գոհություն Հիսուս Քրիստոս Աստծուն, որ ժամանակներն այդ անցել են), սովորություն կար մահվան դատապարտվածներին սպանելու՝ ողջ–ողջ մեխելով նրանց հողի մեջ ուղղահայաց տնկած մեծ փայտե խաչի վրա՝ թողնելով քամու և արևի հանդեպ անպաշտպան, և այդպես՝ գիշեր ու զօր, մինչև ցավից և ծարավի տոչորումից նրանց մեռնելը: Նաև սովորություն կար նրանց ստիպել կրելով տանել փայտյա խաչը մինչև մահապատժի վայրը, որտեղ գամում էին նրանց ձեռքերն այդ խաչին՝ այդպիսով ահագնացնելով նրանց անարգանքն ու տառապանքը:

Կրելով Իր Խաչն ուսերին՝ ամենասովորական և անագորույն չարագործի նման, մեր օրհնյալ Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, շրջապատված հալածող ամբոխով, դուրս գնաց Երուսաղեմից Գողգոթա կոչված վայրը, որ եբրայերեն նշանակում է «գանգատեղի»: Եվ հասնելով Գողգոթա լեռանը՝ սկսեցին չարագանել Նրան՝ Խաչին անխնա մեխելով Նրա ձեռքերն ու ոտքերը, Նա երկու այլ խաչերի միջև էր, որոնց վրա հոգեվարք ապրող ավազակներ էին գամված: Նրա գլխավերևում ամրացրին մի գրություն երեք լեզվով՝ եբրայերեն, հունարեն և լատիներեն, այն է՝ «Հիսուս Նազովրեցի՝ հրեաների Թագավոր»:

Այդ ընթացքում չորս զինվորներից բաղկացած պահակախումբը չորս մասի բաժանեց Նրանից խլած շորերը, իսկ թիկնոցի համար սկսեցին վիճակ գցել, և գետնին նստած՝ նրանք խաղում էին և շաղակրատում, մինչ Հիսուսը տառապում էր:

Եվ նրանք առաջարկեցին Հիսուսին խմել լեղախառն քացախ և զմուռսի հետ խառնած գինի, սակայն Նա հրաժարվեց երկուսից էլ: Եվ չարանենգ մարդիկ, որոնք եկել էին նրանց հետ, ծաղրում էին Նրան և ասում. «Եթե Դու Աստծո Որդին ես, ցած իջիր այդ խաչից»: Քահանայապետերն էլ էին ծաղրում Նրան և ասում. «Եկել էր մեղավորներին փրկելու, թող Ինքն Իրեն փրկի»: Նույնպես ավազակներից մեկը, սեփական կտտանքներից տվայտված և չարացած Նրա դեմ, գոչում էր. «Եթե Դու Քրիստոսն ես, փրկի՛ր Ինքդ Քեզ և մեզ»: Սակայն մյուս ավազակը, ով զղջում էր իր չարագործությունների համար, ասաց. «Տե՛ր, հիշի՛ր ինձ, երբ գաս Քո Արքայությամբ»: Եվ Հիսուսը պատասխանեց. «Այսօր, դու Ինձ հետ կլինես Դրախտում»:

Այնտեղ չկար կարեկից մեկն ով խղճար Նրան, բացի մի աշակերտից և չորս կանանցից: Աստված օրհնեց այդ հավատարիմ և սրտացավ կանանց: Այդ չորսը՝ Հիսուսի Մայրը, Տիրամոր քույրը, Կղեոպասի կին Մարիամը և Մարիամ Մագդաղենացին էին (վերջինս էր, որ երկու անգամ սրբեց Հիսուսի ոտքերն իր մազերով): Իսկ հինգերորդը Հիսուսի սիրելի աշակերտն էր՝ Հովհաննեսը, ով Վերջին Ընթրիքի ժամանակ հակվելով Նրա կրծքին՝ հարցրեց, թե ով է մատնիչը: Երբ Հիսուսը տեսավ նրանց խաչի ստորոտին կանգնած, Նա խնդրեց Իր Մորն ընդունել Հովհաննեսին որպես որդի՝ Իր մահից հետո մխիթարվելու համար, և այդ պահից Հովհաննեսը դարձավ Մարիամին որդի և շատ սիրեց նրան:

Մոտ ժամը վեցին երկիրն ամբողջովին պարուրվեց անթափանց և սարսափելի խավարով, որը տևեց մինչև իններորդ ժամը, երբ Հիսուսը բարձր ձայնով աղաղակեց. «Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչու՞ թողեցիր Ինձ»: Այդտեղ մի ման քացախ կար, և զինվորները, լսելով Նրան, թաթախեցին սպունգը քացախի մեջ և ամրացնելով այն մի երկար եղեգան ծայրին՝ մոտեցրին Հիսուսի բերանին: Ստանալով այն՝ Նա ասաց՝ «Կատարվեց», և գոչելով՝ «Հա՛յր, Քո ձեռքն եմ հանձնում Իմ Հոգին», մեռավ:

Այնուհետև տեղի ունեցավ զարհուրելի երկրաշարժ, և Երուսաղեմի Տաճարի մեծ պատը ճաք տվեց, և ժայռերը դղրդալով ճաքճքվեցին: Այս տեսարաններից սարսափահար՝ զինվորներն ասացին մեկմեկու՝ «Հաստատ Նա Աստուծո Որդին էր», նույնպես այն մարդիկ, ովքեր հեռվից նայում էին Խաչին (նրանց մեջ շատ կանայք կային), կուրծք ծեծելով գնացին իրենց տները՝ վախեցած և տրտմած:

Հրեաները մտահոգ էին և շահագրգիռ, որպեսզի խաչյալների մարմինները շուտափույթ հանվեին խաչերից, քանզի հաջորդ օրը շաբաթ էր, ուստի և նրանք դիմեցին Պիղատոսին: Այդ պատճառով մի քանի զինվորներ եկան և ջարդեցին երկու ավազակների սրունքները՝ նրանց սպանելու նպատակով, սակայն մոտենալով և Հիսուսին արդեն մեռած գտնելով՝ նրանք միայն խոցեցին Նրա կողը նիզակով: Բացված վերքից իսկույն արյուն և ջուր ցայտեց:

Այդտեղ էր նաև Հովսեփ անունով մի բարի մարդ Հրեաստանի Արիմաթեա քաղաքից, ով հավատացել էր Քրիստոսին և թաքուն գնալով Պիղատոսի մոտ (հրեաների հանդեպ ունեցած վախից)՝ աղերսեց նրան թույլ տալ իրեն Հիսուսի Մարմինը վերցնել: Պիղատոսի համաձայնությամբ նա և ոմն Նիկոդեմոս, իջեցնելով Մարմինը, թաղման նախապատրաստող հրեական սովորության համաձայն՝ օծեցին այն ամոքայուղերով և բալասանով և փաթաթեցին կտավով: Այնուհետև նրանք թաղեցին Տիրոջ Մարմինը խաչելության վայրից ոչ հեռու մի այգում գտնվող նոր ժայռակոփ գերեզման–դամբանի մեջ, որտեղ մինչ այդ ոչ մեկը չէր թաղվել: Վերջում նրանք, մի մեծ քար գլորելով, փակեցին գերեզմանի մուտքը և հեռացան՝ թողնելով Մարիամ Մագդաղենացուն այդտեղ՝ մուտքի մոտ նստած:

Քահանայապետերն ու փարիսեցիները, հիշելով, որ Հիսուս Քրիստոսն ասել էր Իր աշակերտներին, որ Իր մահվան երրորդ օրը գերեզմանից հարություն կառնի, գնացին Պիղատոսի մոտ և շատ խնդրեցին, որ գերեզմանը երեք օր խստագույնս հսկ-

վի, քանզի վախենում էին, որ աշակերտները, գողանալով Նրա Մարմինը, կհայտարարեին ժողովրդին, թե Քրիստոսը հարություն առավ մեռելներից: Պիղատոսը համաձայնելով գերեզմանի մոտ մշտական պահապան զինվորներ նշանակեց, գերեզմանաքարն էլ կնքվեց: Այդպես էլ այն մնաց կնքված՝ խիստ հսկողության տակ, մինչև երրորդ օրը, որը շաբաթվա առաջին օրն էր (չմոռանանք, որ Հրեաստանում և Անգլիայում՝ Դիքենսի հայրենիքում, շաբաթը սկսվում է կիրակիից — ծանոթ. թարգմանչի):

Երրորդ օրը՝ լուսաբացին, Մարիամ Մագդաղենացին, մյուս Մարիամն ու էլի մի քանի կանայք եկան գերեզման այցի՝ իրենց հետ բերելով թանկարժեք յուղեր: Եվ մինչ նրանք խոսում էին, միմյանց ասելով՝ «Մենք ինչպե՞ս ենք գլորելու քարը», երկիրը դղրդաց, ցնցվեց, և մի հրեշտակ, Երկնքից իջնելով, տեղաշարժեց այն և նստեց վրան՝ հանգստանալու: Նրա տեսքը լուսաճաճանչ էր, հայացքը՝ ինչպես փայլակ, հանդերձը՝ ձյունաճերմակ, նրա հայացքից շանթահար՝ պահապան զինվորները կիսամեռ ընկան՝ վախից քարացած և զարհուրած:

Մարիամ Մագդաղենացին, տեսնելով գլորված քարը և, որևէ գերբնականի սպասելիք չունենալով, վազեց դեպի Պետրոսն ու Հովհաննեսը, ովքեր գալիս էին այդտեղ, և ասաց. «Նրանք տարե՞լ են Տիրոջը և չգիտենք, թե որտեղ են Նրան դրել»: Նրանք անմիջապես վազեցին դեպի գերեզմանը, բայց երիտասարդ Հովհաննեսը, լինելով արագավազ, երկուսից առաջ անցավ և առաջինը հասավ այնտեղ: Նա կռացավ և նայելով գերեզմանի ներսը՝ տեսավ փռված կտավից պատանքը, որի մեջ փաթաթվել էր Մարմինը, սակայն ներս չմտավ: Երբ Պետրոսը մոտեցավ, նա ներս մտավ և տեսավ քաթանե սավանները մեկտեղված և մի սրբիչ էլ՝ առանձին դրված, որով պարփակվել էր Տիրոջ գլուխը: Այդ պահին Հովհաննեսն էլ ներս մտավ և դրանք տեսավ: Հետո նրանք վերադարձան տուն՝ մյուսներին էլ պատմելու իրենց տեսածը:

Բայց Մարիամ Մագդաղենացին մնաց գերեզմանի մոտ և լաց էր լինում: Քիչ ժամանակ անց հակվելով՝ նա նայեց գերեզմանի ներսը և այնտեղ տեսավ երկու հրեշտակների՝ լույս– ճերմակը զգենած, նստած այնտեղ, որտեղ Քրիստոսի Մարմինն էր դրվել: Նրանք հարցրին. «Ո՞վ կին, ինչու՞ ես լաց լինում»: Նա պատասխանեց, «Որովհետև իմ Տիրոջը տարել են, ու չգիտեմ էլ, թե ուր»: Նրանց պատասխանելով՝ նա շրջվեց և տեսավ իր հետևում կանգնած Հիսուսին, բայց այդ պահին չճանաչեց Նրան: «Ո՞վ կին,— հարցրեց Հիսուսը,— ինչու՞ ես արտասվում, ի՞նչ ես փնտրում»: Մարիամը, կարծելով, թե իր հետ Խոսողը այգեպանն է, պատասխանեց. «Տի՛ր, եթե դու ես տարել իմ Տիրոջն այստեղից, ասա՛ ինձ, թե որտեղ ես դրել, և ես Նրան հետ կվերցնեմ»: Հիսուսն արտաբերեց նրա անունը. «Մարիամ»: Այդժամ նա ճանաչեց Նրան ու ցնցված բացականչեց. «Ուսուցի՛չ»: «Չդիպչես Ինձ,— Քրիստոսն ասաց,— քանզի Ես դեռ չեմ բարձրացել Հորս մոտ, այլ գնա Իմ աշակերտների մոտ և ասա՛ նրանց, որ Ես գնում եմ Իմ և ձեր Հոր մոտ, Իմ և ձեր Աստծո մոտ»:

Մարիամ Մագդաղենացին այդպես էլ արեց, նա գնաց և պատմեց աշակերտներին, որ տեսել էր Քրիստոսին, և այն ամենն, ինչ Նա ասել էր իրեն, աշակերտների հետ միասին նա գտավ նաև մյուս յուղաբեր կանանց, որոնցից նա բաժանվել էր գերեզմանի մոտ, երբ գնաց երկու աշակերտներին՝ Պետրոսին և Հովհաննեսին կանչելու: Այդ կանայք նրան և մյուսներին պատմեցին, թե ինչպես էին գերեզմանաքարի մոտ տեսել երկու հոգու՝ լուսափայլ հանդերձանքով, որոնց տեսքից վախեցած՝ գետնին էին խոնարհվել, որոնք, սակայն, ասել էին իրենց, որ Տերը հարություն է առել: Նաև պատմեցին նրանք, որ մինչ շտապում էին հասնել և այս ամենի մասին պատմել, ճանապարհին տեսնում են Քրիստոսին և, ընկնելով Նրա ոտքերը, երկրպագում Նրան: Բայց այդ ժամանակ այս տեղեկություններն առաքյալներին թվում էին դատարկ հորինվածքներ, և նրանք չէին հավատում դրանց:

Պահակախմբի զինվորներն էլ, իրենց հերթին սթափվելով կարկամված վիճակից, ուղևորվեցին քահանայապետերի մոտ՝ պատմելու համար այն ամենը, ինչ տեսել էին, քահանայապետերը լռեցրին նրանց մեծ փողերի միջոցով և կարգադրեցին գնալ և տարածել, որ իրենց քնած ժամանակ աշակերտները գողացել տարել են Մարմինը:

Եվ այնպես պատահեց, որ այդ նույն օրը Սիմոնը, ով տասներկու առաքյալներից մեկն էր, և Կղեովպասը՝ Հիսուսի հետևորդներից մեկը, միասին գնում էին Էմաուս կոչված գյուղը, որը քիչ էր հեռու Երուսաղեմից: Քայլելիս նրանք խոսում էին Քրիստոսի մահվան և հարության մասին, երբ նրանց միացավ մի օտարական, Ով բանիմաց բացատրում էր Սուրբ Գրքերը և եռանդով խոսում Աստծո մասին, ուստի ճանապարհորդները զմայլվում էին Նրա գիտությամբ: Երբ նրանք գյուղ հասան, արդեն մթնշաղ էր, և աշակերտները խնդրեցին օտարականին մնալ գիշերելու, ինչին Նա համաձայնեց: Երբ երեքն էլ նստեցին ընթրելու, Նա վերցրեց հացը, օրհնեց այն և բեկանեց, ինչպես Քրիստոսն էր դա արել Վերջին՝ Խորհրդավոր Ընթրիքի ժամանակ: Զարմացած նայելով՝ նրանք տեսան, թե ինչպես էր Նրա դեմքը կերպարանափոխվել, և որ նրանց առջև Ինքը՝ Քրիստոսն էր, և մինչ նրանք ապշած նայում էին, Նա անհայտացավ:

Նրանք հենց այդ պահին վեր կացան և վերադարձան Երուսաղեմ, այնտեղ գտնելով մյուս աշակերտներին միասին նստած՝ պատմեցին նրանց, ինչ որ տեսել էին: Եվ մինչ նրանք խոսում էին, Հիսուսը հանկարծահայտ կանգնեց հավաքվածների մեջ և ասաց. «Խաղաղություն ձեզ»: Տեսնելով, որ նրանք շատ վախեցած են, Նա ցույց տվեց Իր ձեռքերն ու ոտքերը և հորդորեց շոշափել, և որպեսզի քաջալերի նրանց և ժամանակ տա ուշքի գալու, նրանց ներկայությամբ Նա մի կտոր խորոված ձուկ ու մի քիչ էլ մեղրախորիսխ կերավ:

Բայց Թոմասը, որ տասներկու առաքյալներից մեկն էր, այդ ժամանակ այդտեղ չէր, և երբ հետագայում նրան մյուսները հա-

ղորդեցին՝ պնդելով, որ տեսել են Տիրոջը, նա պատասխանեց. «Քանի դեռ չեմ տեսել գամերի հետքերը Նրա ձեռքերին, չեմ շոշափել Նրա կողն ու մատներս մտցրել գեղարդով բացված վերքի մեջ, ես չեմ հավատա»: Հենց այդ վայրկյանին, չնայած որ բոլոր դռները գոց էին և կողպված, Հիսուսը նորից հրաշահայտ կերպով կանգնեց նրանց մեջ և ասաց. «Խաղաղությունն ձեզ»: Հետո Նա ասաց Թոմասին. «Այստեղ բեր մատներդ և շոշափիր ձեռքերս, և մեկնիր Ինձ ձեռքդ, մտցրու այն կողիս մեջ և մի՛ եղիր անհավատ, այլ՝ հավատացող»: Այդժամ Թոմասը դարձավ Նրան և բացականչեց. «Տեր իմ և Աստված իմ»: Եվ Հիսուսը նրան ասաց. «Թոմա՛ս, դու տեսար Ինձ և հավատացիր: Երանելի են նրանք, ովքեր չեն տեսել Ինձ, բայց հավատացել են»:

Դրանից հետո Հիսուս Քրիստոսին տեսան միանգամից Նրա հինգ հարյուր հետևորդներ, ոմանց հետ էլ Նա մնաց քառասուն օր՝ ուսուցանելով նրանց և պատգամելով, որ գնան մինչև աշխարհի ծայրերն ու ավետեն Բարի Լուրը և քարոզեն Իր հավատքը՝ չմտահոգվելով, թե չար և մեղավոր մարդիկ ինչ կանեն իրենց: Եվ վերջին անգամ աշակերտների հետ Երուսաղեմից շարժվելով՝ Նա ուղեկցեց նրանց բավականին հեռու՝ մինչև Բեթանիա, որտեղ օրհնեց նրանց և ամպի վրա համբարձվեց Երկինք, որտեղ Նա նստեց Հայր Աստծո աջ կողմը: Եվ մինչ նրանք ակնապիշ նայում էին ջինջ պայծառ երկնքին, որի լազուրում Նա անհետացավ, նրանց հայտնվեցին երկու ճերմակազգեստ հրեշտակներ և ազդարարեցին, որ ինչպես նրանք Քրիստոսին տեսան Երկինք բարձրանալիս, այդպես էլ կգա օրը, երբ Նա կիջնի Երկնքից՝ դատելու ողջ աշխարհը:

Քրիստոսի՝ Երկինք համբառնալուց հետո առաքյալները սկսեցին ուսուցանել ժողովրդին, ինչպես որ Նա էր ավանդել: Եվ համալրված լինելով նորընտիր առաքյալով՝ Մատաթիայով, որը փոխարինեց մեղսաչար Հուդային, առաքյալները հեռացան աշխարհի չորս ծագերը՝ պատմելով մարդկանց Քրիստոսի Կյանքի և Մահվան, նաև Խաչելության ու Հարության մասին, հաղորդե-

լով Նրա ուսուցանած վարդապետությունը՝ մկրտում էին նրանց Քրիստոսի անվամբ: Եվ Քրիստոսի տված զորության միջոցով նրանք բժշկում էին հիվանդներին, բացում էին կույրերի աչքերը, համրերի՝ լեզուն, խուլերի՝ ականջները, ինչպես իրենց Ուսուցիչն էր արել: Եվ Պետրոսը, նետվելով զնդան, խոր գիշերին ազատվեց այնտեղից հրեշտակի միջոցով, մեկ ուրիշ անգամ, երբ Անանիա և Սափիրա ամուսինները պայմանավորվածությամբ խաբեցին Պետրոսին, նրա խոսքով նրանք անշնչացած ընկան գետին:

Ուր էլ որ աշակերտները գնացին, ենթարկվեցին հալածանքների և դաժան, անմարդկային վերաբերմունքի: Քրիստոնյաներին մշտապես և մոլեռանդ հալածողներից մեկն էր ոմն Սավուղ, որը Ստեփանոս անունով քրիստոնյային քարկոծելով մեռցնելու ժամանակ բռնել, պահել էր գազանաբարո և ամբարիշտ մարդասպանների շորերը: Հետագայում, սակայն, Աստված դարձի բերեց Սավուղին՝ փափկացնելով նրա կարծր սիրտը: Երբ նա գնում էր Դամասկոս՝ այնտեղ բացահայտելու քրիստոնյաներին բանտեր քարշ տալու համար, ճանապարհին նրա շուրջբոլորը լուսավորվում է երկնային արփիափայլ լույսով, և ձայնը երկնքից կանչում. «Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչու՞ ես Ինձ հալածում»: Հետո նա ինչ–որ անտեսանելի ձեռքով ցած գցվեց իր ձիուց ուղեկցորդ զինվորների և պահակախմբի աչքի առաջ: Երբ ուղեկիցները նրան բարձրացրին գետնից, հասկացան, որ կուրացել էր: Երեք օր նա մնաց կույր՝ ողջ ընթացքում չուտելով և չխմելով, մինչև որ քրիստոնյաներից մեկը (հրեշտակի կողմից ուղարկված նրա մոտ) վերականգնեց նրա տեսողությունը Հիսուս Քրիստոսի անունով: Դրանից հետո նա դարձավ քրիստոնյա հավատացյալ՝ առաքյալների հետ մարդկանց քարոզելով, սովորեցնելով և մեծ ծառայություն մատուցելով:

Առաքյալներն ու նրանց հետևորդները վերցրին «Քրիստոնյա» ինքնանվանումը մեր Տեր և Փրկիչ Քրիստոսի անվամբ, և որպես քրիստոնյայի խորհրդանիշ՝ նրանք կրում էին խաչ, քանզի Հիսուսը Խաչի վրա էր ընդունել Իր տաժանագին և փր-

կարար մահը: Բայց այդ ժամանակ աշխարհում տիրապետում էին կեղծ, վայրագ և դժնի կրոններ, որոնք մարդկանց դրդում էին դաժանության և բռնության: Տաճարներում զոհաբերում էին կենդանիներ և անգամ մարդկանց՝ հավատալով, որ նրանց արյան հոտը հաճելի է աստվածներին (կարծում էին, որ գոյություն ունեն մեծ թվով աստվածներ), նաև տարածված էին շատ այլ դժնդակ և գարշելի ծեսեր: Այդուհանդերձ, չնայած այս ամենին, և չնայած որ քրիստոնեական հավատը ճշմարիտ էր, այդքա՜ն բարի և առաքինի՝ հին կրոնների քրմերը երկար ժամանակ կարողանում էին համոզել ամբոխներին ամեն կերպ վնասել, պատուհասել քրիստոնյաներին, և քրիստոնյաները երկար ժամանակ կախաղան էին հանվում, գլխատվում էին, այրվում և կենդանի թաղվում, նրանց ամֆիթատրոններում պատառոտում էին վայրի գազանները, որպեսզի արբշիռ և արյունռուշտ ամբոխը զվարճանար: Ոչինչ ի զորու չէր նրանց լռեցնելու և ոչ էլ ահաբեկելու, քանզի նրանք գիտեին, որ եթե կյանքում կատարեն իրենց պարտականությունը՝ մահից հետո կգնան Դրախտ: Այսպիսով հազար հազարավոր նոր քրիստոնյաներ տարածվում էին աշխարհում և քարոզում մարդկանց, նրանք դաժանաբար սպանվում էին, բայց նրանց փոխարինում էին այլ հավատացյալներ, և այս կերպ՝ աստիճանաբար, նրանց հավատքը դարձավ աշխարհի մեծագույն կրոնը:

Հիշի՛ր՝ քրիստոնեությունը հարատև ԲԱՐԻՆ ԳՈՐԾԵԼՆ Է, անգամ նրանց, ովքեր մեզ չարիք են գործել: Քրիստոնեություն նշանակում է սիրել մերձավորին, ինչպես սեփական անձը, և վարվել բոլոր մարդկանց հետ այնպես, ինչպես կուզենայինք, որ նրանք մեզ հետ վարվեին: Երբ մեր սրտերը խաղաղ և հանդարտ են, որովհետև ինքներս ենք հեզահամբույր, խղճահարվող և ներողամիտ, բայց ոչ՝ ինքնահավան, և երբ մեր աղոթքներն ու սերն առ Աստված ծնում են ոչ թե մեծամտություն, այլ խոնարհամտություն, որով հեզորեն ջանում ենք ամեն ինչում և ամենուր լինել արդար, ուրեմն Տիրոջ հանդեպ մեր սերը հաստատ ու ճշմարիտ

է, իսկ մենք՝ քրիստոնյաներ։ Շարունակելով այսպես ապրել և հիշել մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Կյանքն ու փրկարար Մահը, ձգտելով ապրել Նրա պատգամների համաձայն՝ մենք կունենանք հաստատուն հույս, որ Աստված կների մեր մեղքերն ու սխալները և կտա մեզ խաղաղ կյանք և անխոռով, աներկյուղ, երկնուղի մահ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ 4

1996 ԹՎԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ. 6

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԽՈՍՔ. 8

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ 14

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ 18

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ 23

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ 28

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ 33

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ 39

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ 44

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ 52

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ 57

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ 61

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ 66

ՉԱՐԼԶ ԴԻՔԵՆՍ

ՄԵՐ ՏԻՐՈՋ՝ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԿՅԱՆՔԸ

CHARLES DICKENS
“THE LIFE OF OUR LORD”

In Armenian language
Translated from English by
Karen Gevorgyan

Շապիկի նկարը՝ «Հիսուսը մանուկների հետ»,
2020 թ., կտավ, յուղ., 170 x 120 սմ

Թարգմանիչ՝ Կարեն Գևորգյան
Նկարիչ՝ Մայիս Մխիթարյան
Խմբագիր՝ Ռուբեն Նահատակյան
Ձևավորումը՝ Վիտալի Ասրիևի
Սրբագրությունը՝ Մարգարիտ Իսկանդարյանի

Տպագրությունը՝ օֆսեթ:
Թուղթը՝ կավճապատ:
Չափսը՝ 70x100/16:
Ծավալը՝ 5 տպ. մամուլ:

Տպագրվել է «Զանգակ-97» հրատարակչության տպարանում
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak